Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1
10/2006

08 OCT 2010

9(ա 43)
Մ-93

ՄՐԱՒԵԱՆ

Հանրագիտ. 9(47+925)
Ա-52
1-0

ԹԱՄԱՆԱԿ Է ՍԹԱՓՈՒԵԼՈՒ

(Մի դաշնակցականի դիմումը իր ընկերներին)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԻ ԽՈՒՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ

ԳԻՆՆ Է 15 ԿՊԵ.

ՎԻԵՆՆԱ
ԵՂԲ. ՅԱԿՈԲԵԱՆՆԵՐԻ ՏՊԱՐԱՆ
1906

9(С43)
М-33

ՄՐԱՒԵԱՆ

Ամբ-յան
ՍՏԱՑՈՒՄ
Հրաձեռ
մասն
№ 7344

ԹԱՄԱՆԱԿ Է ՍԹԱՓՈՒԵԼՈՒ

(Մի դաշնակցականի դիմումը իր ընկերներին)

1792
2203
2343
6179
ՀԱՆՐՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ОТДЕЛ
ՀԱՆԴԵՍԻ Է
1994 թ.
ԳՐԱԴԱՐԱՆ
VII-18 1925
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

1906

0 FEB 2013

5473

Այն մտքերը, որ ես այստեղ այսպէս հրապարակօրէն արտայայտում եմ, ես ոչ միայն խորհել, մտածել եմ, այլ և զգացել եմ մինչև հոգուս խորքերը, ապրել եմ այդ ամենը։ Ես այն դուրս եմ բերել տանջանքների աշխարհից։ Ճշմարտութիւններ ասելու ես յաւակնութիւն չունեմ, բայց համոզուած եմ խորապէս, որ մենք գնում ենք ոչ այն ճանապարհով, որով պէտք է ընթանայինք։ Եւ ցանկալի կը լինէր, որ մեր բոլոր ընկերները քննադատական յետադարձ հայեացք գցէին անցած ուղիի վրայ և որոշէին, թէ այսուհետև ո՞րն է մեր ճանապարհը։

4791-2010

ՆՈՒԷՐ

ԵՐԿՐԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ—

Իմ արտակից ընկերներ՝

ՎԱՀԱՆԻՆ (ԿՈՄՍԻՆ) ԵՒ ՍԱՐԳՍԻՆ

ՄՐԱՒԵԱՆ

60-ական և 70-ական թուականներից մեր մէջ Կովկասում սկսում է զարգանալ կապիտալիզմը։ Բացուի նաւթարդիւնաբերութիւնն էր, որ մի հսկայական զարկ տուեց Կովկասի արդիւնաբերական կեանքին։ Ակներև է, որ տնտեսական մի ամբողջ յեղաշրջում պէտք է առաջ բերէր համապատասխան յեղաշրջում և սոցիալական կեանքում։ Եւ ահա առաջ է գալիս մի ուժեղ դասակարգ—արդիւնաբերական բուրժուազիան և յատկապէս հայ բուրժուազիան, որը իր վրայ է բևեռում ամենքի ուշադրութիւնը։

Սկսւում է հնի և նորի պայքարը—մի կողմը երիտասարդ և ուժեղ բուրժուազիան, միւս կողմ մեռնող ֆեոդալիզմի ներկայացուցիչ ազնուականութիւնը։

Այստեղ մի հանգամանք չափազանց խճճում է խնդիրը և, խանգարելով իրերի ճշգրիտ ըմբռնողութեանը, առիթ է տալիս խոշոր թիւրիմացութիւնների։ Դա ազգայնական խնդիրն է։ Բանը նրանումն է, որ նորածին բուրժուազիան բաղկացած էր գլխաւորապէս հայերից, իսկ մեռնող ազնուականութիւնը վրացիներից և թուրքերից։ Ճիշտ է, թուրքերն էլ ունեն խոշոր բուրժուազիա, բայց այդ բուրժուազիան լինելով միայն դրամատէր և ըէնտեօր, որ ոչ մի ակտիվ մասնակցութիւն չունի երկրի արդիւնաբերական կեանքում, իր սոցիալական դիրքով, իր շահերով և ձգտումներով աւելի մօտենում է ազնուականութեանը, քան ժամանակակից մաքով հասկացող արդիւնաբերական բուրժուազիային։

Երբ մենք հայեացք ենք ձգում ազգերի պատմութեան վրայ, մենք տեսնում ենք, որ տիրող դասակարգերը, իշխելով ժողովրդի վրայ և նայելով նրա վրայ սեփական շահերի պրիզմայի միջոցով, երբէք չեն ընդունել ժողովրդի ուրոյն շահերի գոյութիւնը և նրա շահերը միշտ համանիշ են համարել իրանց սեփական շահերին։ Եւ աշխատաւոր ժողովուրդը միշտ աւելի կամ պակաս ենթարկուել է տիրող դասակարգերի ազդեցութեան՝ նայած թէ նա դասակարգային գիտակցութեան որ աստիճանի վրայ է կանգնած եղել։

Դասակարգային գիտակցութիւնը թէ հայերի, թէ վրացիների և թէ նամանաւանդ թուրքերի մէջ շատ ցածր աստիճանի վրայ էր։ Ահա թէ ինչու մի զուտ սօցիալական պայքար, բուրժուազիայի և ազնուականութեան պայքարը այնքան հեշտութեամբ վերածուեց ազգայնական պայքարի։ Ահա թէ ինչու թուրք և վրաց ազնուականութեան ատելութիւնը դէպի հայ բուրժուազիան փոխարկւում է թուրք ու վրացի ժողովուրդների ատելութեան դէպի հայ ժողովուրդը։ Ահա թէ ինչու քրիստոնեայ և կուլտուրական վրացիները համակրում են ոչ թէ քրիստոնեայ և կուլտուրական հայերին, այլ մահմեդական և յետամնաց թուրքերին, որոնց տիրող դասակարգը՝ ազնուականութիւնը սակայն ունի նոյն դասակարգային շահերը, ինչ որ վրաց ազնուականութիւնը։

Եւ ահա մենք տեսնում ենք հետևեալ բնորոշ պատկերը։ Մինչդեռ հայ բուրժուազիայի իդէօլոգ—ներկայացուցիչ Արծրունին իր «Մշակ» լրագրում բարձրացնում է կովկասեան ազգերի ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան կոչը, ընդհակառակը վրացի և թուրք ազնուականութեան իդէօլոգ ներկայացուցիչները՝ Ծավճավաձէները և Աղայեվները լսել անգամ չեն ուզում այդ մասին և մի բերան գոռում են, որ հայերը խլեցին վրացիների և թուրքերի ձեռքից նրանց հայրենիքը։ Հայերի եղբայրութեան և հաւասարութեան քարոզին թուրքերը և վրացիները պատասխանում էին անզուսպ ատելութեամբ դէպի հայերը։ Եւ դա շատ հասկանալի է։ Եւ իսկապէս, հայ բուրժուազիան, որպէս իր պրոտոտիպ ֆրանսիականը, հնչեցնում է հաւասարութեան և եղբայրութեան ձայնը ոչ այն պատճառով, որ նա պահար է իսկական հաւասարութեան և եղբայրութեան, այլ այն պատճառով, որ միայն «հաւասարութիւնը և եղբայրութիւնը», այսինքն ազնուականութեան արտօնութիւնների ոչնչացումը և նրա իրաւունքների հաւասարացումը բուրժուազիայի իրաւունքներին, վերջնական հարուած կը տայ ֆէօդալական կարգերին և ճանապարհ կը բացէ բուրժուազիայի անարգել առաջխաղացութեան։ Ահա թէ ինչու երբ «Մշակ»-ը եղբայրութիւն էր քարոզում կովկասեան ազգերի և մասնաւորապէս հայերի, թուրքերի և վրացիների մէջ, այս վերջինների մէջ այդ քարոզը միայն բացասական արձագանք էր գտնում, քանի որ նրանք լաւ էին ըմբռնում, որ բուրժուազական «Մշակ»-ի բերանում եղբայրութեան քարոզը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մարտական կոչ, որի նպատակն է խլել վրացիներից և թուրքերից, աւելի ճիշտը նրանց ազնուականութիւնից նրա ֆէօդալական իշխանութիւնը և ֆէօդալական կարգերի տեղ հաստատել սեփականը՝ բուրժուականը։

Այս պայքարը հայ բուրժուազիայի և թուրք ու վրացի տիրող դասակարգերի միջև սկսուած է վաղուց, տասնեակ տարիներից ի վեր։ Մինչև հիմա այդ ան-

ագոնիզմը երկու թշնամի բանակների միջև ոչ միայն չը հասաւ իր վախճանին, այլ ընդհակառակը, հէնց ներկայումս շնորհիւ Ռուսաստանի անցկացրած փոխանցուկ և անարխիական շրջանին՝ արտայայտուեց մի առանձին ուժգնութեամբ։

Վրացիք բուրժուազիա չունէին, կամ համարեա թէ չունէին։ Բայց նրանք ունէին մի ահագին ազնուականութիւն, որից դուրս եկան վրացիների ազգային վերածնութեան առաջին պիօներները։ Ազնուականութիւնն էր, որ իր միջից տալիս էր ինտելիգենցիա, ազնուականութիւնն էր, որ մամուլ և դպրոցներ ունէր և առհասարակ ազնուականութիւնն էր, որ ժողովրդի մտաւոր կեանքին ուղղութիւն էր տալիս։ Իսկ ինչ ուղղութիւն էր դա։ Վրաց ազնուականութիւնը իր իդէօլոգների—Ճավճավաձէների և Ցերեթելիների միջոցով մաժուլի էջերում և այլ ասպարէզներում կատաղի կռիւ էր մղում բուրժուազիայի դէմ, յատկապէս հայ բուրժուազիայի դէմ, և որովհետև տիրող դասակարգերն իրանց ձգտումներին միշտ ազգային բնաւորութիւն են տալիս, ապա վրացի ազնուականներն իրանց դասակարգային կռիւը հայ բուրժուազիայի դէմ յայտարարեցին վրացիների և հայերի ազգային պայքար։ Ի լուր ամբողջ վրաց ժողովրդի նրանք յայտարարում էին, թէ կեղեքիչ հայերը տիրեցին ամբողջ Վրաստանին, թէ հայերը ստրկացրին ամբողջ վրաց ժողովուրդը։ Գիտակցութիւնից զուրկ վրացի մասսան չէր կարող նկատել, որ կռիւը դասակարգային է և ոչ ազգային, որ ազնուականութիւնը ոչ թէ վրաց ժողովրդի մասին է հոգում, այլ իր սեփական կաշուի մասին, որ նա պարզապէս ժոլորեցնում և խարում է ժողովրդին։ Եւ ահա վրացի ազնուականու-

թեան և նրա իդէօլոգ-ինտելիգենցիայի միջոցով տարածւում է վրաց մասսայի մէջ հայատեացութեան թոյնը։

Հայերը տիրեցին Վրաստանին և ստրկացրին վրաց ժողովուրդը—պէտք է կռուել նրանց դէմ և ազատուել նրանցից։ Այսպէս էր ասում ազնուականութեան հին սերունդը յանձին Ճաւճաւաձէի և ուրիշների և կռւում էր հայ բուրժուազիայի դէմ հին, մաշուած, միջնադարեան զէնքերով։ Սակայն ժամանակի ընթացքում առաջ եկաւ նացիոնալիստական շկոլայով անցած, շովինիզմի թոյնով սնուած ու դաստիարակուած մի նոր, թարմ ինտելիգենցիա, որը աւելի խորը ըմբռնեց իրերի դրութիւնը, որը պարզ կերպով տեսաւ, որ Ճաւճաւաձէների իդէալը—ֆեօդալիզմի պահպանումը—մի ցնորք է, որ ֆեօդալիզմը անդառնալի կերպով մահուան է դատապարտուած։

Բայց ինչ անել, ինչպէս ազատել Վրաստանը «հայերի ստրկացումից»։ Պէտք է կռուել հայ բուրժուազիայի դէմ։ Իսկ կռուել բուրժուազիայի դէմ ներկայ պայմաններում կարելի է միայն մի ճանապարհով՝ այն, որ ցոյց է տուել Մարքսը։ Եւ ահա մենք դիտում ենք մի ըստ երևոյթին զարմանալի և ուշագրաւ երևոյթ.—մի վերին աստիճանի շովինիստ, միևնոյն ժամանակ անզուսպ հայատեաց մի ինտելիգենցիա, որ սակայն մինչև հոգու խորքերը սիրահարուած է Մարքսի և նրա գաղափարների վրայ։ Հապիւ թէ սխալ լինի, եթէ ասելու լինինք, թէ վրաց ամբողջ ինտելիգենցիան դաւանում է մարքսիզմի հիմունքները, կամ առնուազն գործում է մարքսիզմի դրօշակի տակ։ «Սխիվի», «Մօգզաուրի», «Իվերիա», «Ցնորիս Փուրցելի», «Возрожденіе»—բոլորը, բոլորը խօսում են մարք-

սիզմի և գիտական սոցիալիզմի անունից և ըստ երևույթին պրոլետարիատի և աշխատաւոր ժողովրդի ձգտումների իսկական թարգմանն են հանդիսանում։ Եւ սակայն դէպի աշխատաւոր ժողովուրդը տածած սէրը չէ, որ միացնում է սոցիալ-դեմոկրատիայի կամ մարքսիզմի դրօշակի տակ վրաց ինտելիգենցիան, այլ այն ատելութիւնը, որ նա տածում է դէպի հայ բուրժուազիան։ Ահա թէ ինչու սոցիալ-դեմոկրատիան վրացիների մէջ մաքուր պրոլետարական մի կուսակցութիւն չէ, այլ պարունակում է իր մէջ հսկայական դօղա ամենավատ նացիոնալիզմի՝ շովինիզմի և յատկապէս հայատեացութեան, որ այնքան պարզ կերպով արտայայտուեց հայ-թրքական ընդհարումների ժամանակ, երբ վրացի սոցիալ-դեմոկրատները աշխատում էին ամէն կերպ ընդհարումների մեղքը գցել հայերի վրա, մինչդեռ դէպի Թուրքերը տածած նրանց վերաբերմունքը պարզապէս համակրական էր։ Ինչ վերաբերում է վրացական մնացած շրջաններին (որոնց օրգաններն են «Ցնորիս Փուրցելի», «Իվերիա», «Возрожденіе»),—այստեղ արդէն հայատեաց զգացումների բռնկումը աւելի ուժգին էր և չարախնդութիւնը հայերի դժբախտութիւնների հանդէպ հասնում էր պարզապէս ցինիզմի։

Սակայն հայատեացութեան այդ բռնկումը վրաց ժողովրդի մէջ մի անմեղ երևոյթ էր համեմատած վանդալական այն բռնկման հետ, որով արտայայտուեց Թուրք տիրող դասակարգերի ատելութիւնը դէպի հայ բուրժուազիան։

Եթէ վրաց ազնուականութիւնը նոյն իսկ սոցիալ-դեմոկրատիայի միջոցով և յանուն մարքսիզմի կարողացաւ պատուաստել հայատեացութեան թոյնը վրաց

ժողովրդի մէջ և այդպիսով արգելք հանդիսանալ երկու ժողովուրդների աշխատաւոր դասի սերտ միացմանը, բայց նա չը յաջողեց առաջ բերել եղբայրասպան պատերազմը հայերի և վրացիների մէջ, այն սոսկալի պատերազմը, որ յաջողեցրեց Թուրք տիրող դասակարգը հայերի և Թուրքերի մէջ։ Եւ դա ոչ թէ այն պատճառով, որ վրաց ազնուականութիւնը պակաս եռանդուն էր կամ աւելի մարդասէր, քան Թուրք բէգութիւնը, այլ այն պատճառով, որ վրացի և Թուրք ժողովուրդները գտնւում են կուլտուրական (տնտեսական) տարբեր աստիճանների վրայ։ Մինչդեռ առաջինը դարերից ի վեր վարում է նստակեաց և երկրագործական կեանք, երկրորդը դեռ չէ դուրս եկել նոմադական շրջանից։ Մեր հարևան Թուրքերի մի խոշոր մասը դեռ ևս Թափառական խաշնարածային (նոմադական) կեանք է վարում, իսկ մնաց մասը, որ նոր է նստակեաց դառել, դեռ չէ կորցրել նոմադի հոգեբանութիւնը։ Կուլտուրական տարբեր շրջանները մարդկանց մէջ ստեղծում են տարբեր հոգեբանութիւն։ Եւ մինչդեռ երկրագործական կեանքը մասնաւոր-անհատական սեփականատիրութեան հիմունքների վրայ մարդկանց ներշնչում է անհատականութիւն, իսկ նստակեաց կեանքը—խաղաղասիրութիւն, ընդհակառակը՝ Թափառական-խաշնարածային կեանքը մարդկանց մէջ զարգացնում է երամակային բնազդը և այն բնազդները, որոնք սովորաբար կոչւում են վանդալական—Թալանի, սպանութեան եւ աւերածութեան բնազդները։ Ահա կուլտուրաների այդ տարբերութիւնն է պատճառը, որ մինչդեռ վրացի իշխանը ոչ մի անմիջական ազդեցութիւն չունի իր հարևացեղակից վրացիների վրա,—չնորհիւ նրանց անհատականութեան, ընդհակառակն Թուրք բե-

դը անսահման անմիջական ազդեցութիւն ունի Թուրք մասսայի վրայ, որ առաջնորդւում է միայն երամակային բնազդներով։ Մինչդեռ վրացի իշխանը երբէք չէր կարող ոգեորել վրաց մասսան թալանի, սպանութեան և աւերածութեան հեռանկարներով, ընդհակառակը Թուրք մասսան, այսպէս ասած, մեռած է դրանց համար *)։

Եւ ահա մենք տեսնում ենք, որ մինչդեռ վրաց ազնուականութիւնը, ինչպէս և զանազան վելիչկոներ, չը կարողացան քարշ տալ իրանց յետևից դէպի ակտիվ գործողութիւններ հայերի վերաբերմամբ վրաց աշխատաւոր ժողովրդին, Թուրք ազնուականութիւնը, օգտւելով Թուրք մասսայի վրայ ունեցած իր անսահման ազդեցութիւնից և նրա սպեցիֆիկ նօմադական—վանդալական բնազդներից, քաղաքական առաջին բարեյաջող պայմաններում պատերազմ հրատարակեց հայ բուրժուազիային։

Բայց հայ բուրժուազիայի կռիւը միայն վրացական և Թուրքական ֆեոդալիզմի դէմ չէր, այլև հայկական ֆեոդալիզմի դէմ, որի համարեա միակ ներկայացուցիչը եկեղեցին էր, որը ամբարած ունէր իր մէջ ամբողջ միջնադարեան ֆեոդալական իդեօլոգան։ Արծրունին էր, իր «Մշակով», որ առաջին անգամ այնքան

*) Ըստ Իվանովիչի նորանցեալ դարի վերջին երեք տարիներում Գանձակի նահանգում տեղի են ունեցել 2,800 սպանութիւններ և հազարաւոր թալաններ։ Շատ բնորոշ է և այն փաստը, որ Թուրք արիստոկրատ ընտանիքները՝ ամենայայտնի խաները և բէգերը նոյն իսկ՝ միակ պատուաբեր զբաղմունքը համարում են որսը և թալանը, երկուսն էլ ատաւիստական հետքեր տընտեսական երկու նախնական շրջանների—որսորդական և նօմադական։

շառաչիւնով հրապարակ եկաւ և երիտասարդ հայ բուրժուազիայի անունից թաշկինակ նետեց զառամեալ հայ ֆեոդալիզմին։ Հաւատարիմ բուրժուական լիբերալիզմի հիմնական սկզբունքներին, նա այստեղ ևս կռւում էր կղերական կաստայականութեան, նրա բացառիկ իրաւունքների և արտօնութիւնների դէմ, և ժողովրդական սկզբունքը լօզունգ ընդունելով, պահանջում էր, որ եկեղեցու դեկը յանձնուի իրան՝ ժողովրդին։ Դարձեալ և դարձեալ բուրժուական լիբերալիզմի նոյն աւանդական կոչը—ազատութիւն, հաւասարութիւն և եղբայրութիւն։ Եւ սակայն, ինչպէս ֆրանսիականը 89 թուին, այնպէս էլ այժմ հայ բուրժուազիան ժողովրդական սկզբունքը առաջ մղելով, ամենից քիչ մտածում էր ժողովրդի մասին։ Նրա համար կարևոր էր, որ կղերականութիւնը դադարէր կաստա լինելուց, զրկուէր իր դասակարգային արտօնութիւններից, իսկ այդ իրագործուելուց յետոյ նրա բոլոր իրաւունքները փաստօրէն բնական ճանապարհով պէտք է անցնէին բուրժուազիայի ձեռքը։ Եւ այդպէս էլ եղաւ։ Երբ ժողովրդական սկզբունքը յաղթանակեց, թէ դպրոցների հոգաբարձութիւնը, թէ եկեղեցիների երեսփոխութիւնը և առհասարակ եկեղեցուն յատկացրած այն բոլոր իրաւունքները, որոնք խլուեց կղերականութիւնից, անցան բուրժուազիայի, աղայականութեան ձեռքը։

Եւ սակայն Արծրունու և առհասարակ մեր լիբերալ-բուրժուական բանակի այս կռիւը հայկական ֆեոդալիզմի-կղերականութեան դէմ անպայման առաջադիմական-յեղափոխական մի քայլ էր, քանի որ այդ կռիւը աւելի յետամնաց հասարակական կարգերի դէմ էր, քան բուրժուական կարգերն են։ Արծրունին քանդում էր միջնադարեան հին, խարխուլ շէնքը, գիշերային չղջիկ-

ների այդ խորհրդաւոր բոյնը,—ահա թէ ինչու մեր ժողովրդի բոլոր առաջադիմական տարրերը ծափահարում էին նրան։ Բայց երբ միջնադարեան ամրոցը փլեց և նրա տեղ բուրժուազիան կառուցեց իր շլացուցիչ (աւաղ, միայն շլացուցիչ) ապարանքը, այն ժամանակ արդէն այդ ապարանքի ներքնայարկերից երևան եկան պրոլետարիատի ըմբոստ զաւակները և յայտարարեցին.— մենք հիմնահատակ կանենք բուրժուական այս փառահեղ շէնքը և նրա տեղ կը բարձրացնենք սեփականը—սոցիալիստականը։

Արծրունին այդ ժամանակ արդէն չըկար։ Հազիւ էր նա վերջացրել իր կռիւը միջնադարեան կարգերի և գաղափարների դէմ, երբ նա մեռաւ։ Արծրունու համար այդ չափազանց բաղդաւոր զուգադիպութիւնը առիթ է տալիս մի թիւրիմացութեան։ Արծրունու մահը մի սահման է նախկին և յետագայ «Մշակի» մէջ։ Մինչդեռ նախկին՝ Արծրունու «Մշակը» քանդում էր հինը և նրա տեղ նորը կառուցում, յետագայ՝ Քալանթարի «Մշակը» այլ ևս ոչ քանդելու և ոչ էլ շինելու բան ունէր, ամենաշատը նա միայն կարկատաններով կարող էր զբաղուել, իսկ ընդհանրապէս պէտք է աշխատէր պահպանել այն, ինչ որ ստեղծել էր իր նախորդը։ Այդ հանգամանքն է պատճառը, որ շատերը (ինչպէս օր. «Յառաջը»), կարծում են, թէ Արծրունուն և նրա յետնորդ Քալանթարին սարեր ու ձորեր են բաժանում Դա իհարկէ մի թիւրիմացութիւն է։ Կատարելապէս ոչ մի սկզբունքային տարբերութիւն չըկայ Արծրունու և Քալանթարի աշխարհայեցողութեան մէջ։ Եթէ Արծրունին ապրէր, նա այժմ նոյնը պիտի ասէր, կամ աւելի շուտ ծամծմէր, ինչ որ ծամծմում է Քալանթարը։ Նա նոյնպէս պայքարողի և առաջադիմականի դերից

պիտի անցնէր պահպանողականի դերին։ Միակ տարբերութիւնը Արծրունու և Քալանթարի մէջ—այդ այն է, որ մինչդեռ առաջինը ծնուել է բուրժուական կեանքի արշալոյսին, երկրորդը դժբախտութիւն է ունեցել երևան գալու այդ կեանքի զագաթնակէտին, երբ բուրժուազիայի յետևից հրապարակ ելած խիզախ աշխատաւորը մահ է սպառնում բուրժուական կարգերին և մի նոր կեանքի՝ իսկական ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան հիմքն է դնում յաւիտենապէս տանջուող մարդկութեան համար։

Այդպիսով մենք տեսնում ենք, որ մինչև 90-ական թուականների սկիզբը հայկական բուրժուական մամուլը կատարում է առաջադիմական դեր։ Միևնոյն ժամանակ մենք տեսնում ենք ամբողջ հայ մամուլի մէջ՝ թէ բուրժուական և թէ կղերական, վերին աստիճանի լրջութիւն, որովհետև կռիւը երկու բանակների մէջ տեղի ունէր հիմնական, սկզբունքային խնդիրների շուրջը։ Այդ լրջութիւնը չէ կրում այլ ևս հայ մամուլը 90-ական թուականներից, երբ սկզբունքային խնդիրները արդէն վճռուած էին, և մենք տեսնում ենք, որ այնուհետև լուրջ կուսակցական կռիւների փոխարէն առաջ են գալիս թայֆայական կռիւներ։ Ի՞նչն էր պատճառը մամուլի այդ տեսակ ճահճային դրութեան։ Մի՞թէ կանգ էր առել հայկական կեանքը։ Ոչ իհարկէ։ Հասարակական մտքի կանգ առնելու պատճառը ոչ թէ օրգանական էր, այլ արտաքին, տնտեսական։ Չը կար մամուլի ազատութիւն Ռուսաստանում, իսկ հայկական մամուլի դէմ յարուցած կառավարչական հալածանքը սոսկալի գոյն էր կրում։ Կիսաֆեոդալական-կիսաբուրժուական կառավարութիւնը խօսքի թոյլ ազատութիւն էր տուել բուրժուական

«Մշակին» և կղերական «Նոր-Դարին», որոնք շարունակում էին քարոզել իրանց հնամաշ և փթած գաղափարները։ Ժամանակն էր, որ քնից արթնացած աշխատաւոր դասը ունենար իր օրգանը, արծարծէր իր դասակարգային շահերը, պայքարէր բուրժուական կարգերի և գաղափարների դէմ։ Սակայն շնորհիւ կառավարչական ճնշումների այդ տեղի չունեցաւ և ամբողջ հայ ազգը, որի թւում և ամբողջ հայ աշխատաւոր մասսան տասնեակ տարիներ ստիպուած եղաւ աշակերտել բուրժուական «Մշակին», որը կամաց կամաց աննկատելի կերպով թունաւորեց ժողովրդի միտքը բուրժուական գաղափարներով, և աշխատաւոր դասը փոխանակ գիտակցելու իր դասակարգային շահերը, վարակուեց բուրժուական աշխարհայեացքով, բուրժուայի շահերը իր սեփական շահերը համարելով։

Այս հանգամանքը միակը չէ, որ սպանեց հայ աշխատաւոր դասի դասակարգային գիտակցութիւնը։ Կան աւելի ծանրակշիռ հանգամանքներ։

Միայն մամուլը չէր, որ շնորհիւ քաղաքական ճնշումների բուրժուազիայի մօնոպոլիան էր դառել։ Կուլտուրական բոլոր ասպարէզներում տիրապետողը բուրժուազիան էր։ Բուրժուազիան էր, որ հիմնեց Լազարեան Ճեմարանը, Աղաբաբեան, Սանասարեան դպրոցները։ Բուրժուազիայի միջոցներով էր, որ հիմնուեցին Գևորգեան ճեմարանը, Ներսիսեան և այլ թեմական դպրանոցները, հարիւրաւոր ստորին ծխական դպրոցները, բուրժուազիան էր, որ հիմնեց բարեգործական, հրատարակչական, թատրոնական և այլ ընկերութիւնները, բուրժուազիան էր, որ հարիւրաւոր հայ ստիպենդիանտներ էր պահում զանազան միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում։ Այդպիսով մենք

տեսնում ենք, որ հայ ժողովուրդն իր ամբողջ մտաւոր մնունդը ստանում է բուրժուական աղբիւրից, իւրացնում է բուրժուական աշխարհայեացքը։

Սակայն ազգային վերածնութեան հիմքը դնելով Կովկասում մամուլի և դպրոցների միջոցով, բուրժուազիան տեսնում էր, որ կուլտուրական վերածնութիւնը դեռ չէ նշանակում քաղաքական վերածնութիւն, և որովհետև ամեն մի ազգի բուրժուազիայի հոգու ամենանուիրական տենչը ազգային պետութիւնն է, որը նրա շահերի հաւատարիմ պաշտպանը լինէր, այդ պատճառով էլ Կովկասահայ բուրժուազիայի մէջ ծնւում է ազգային ինքնուրոյնութեան գաղափարը, և որովհետև Ռուսաստանի սահմաններում՝ Կովկասում նա չէր կարող երևակայել անկախ Հայաստան, այդ պատճառով նա մի առանձին երախտագիտութեամբ իր հայեացքը դարձնում է դէպի «արևելեան քրիստոնեաների պաշտպան» Ալէքսանդր II-ը, երբ այս վերջինս Սան Ստեֆանոյի դաշնագրի մէջ մտցնում է 16-րդ յոդուածը։ Հայ բուրժուազիան հաւատում էր, որ Ռուսաստանի աջակցութեամբ Թիւրքաց-Հայաստանում մի նոր ազատ Բոլգարիա կը ստեղծուի։

Եւ այդպէս, Տաճկա-Հայաստանի ազատագրման գաղափարը Կովկասում առաջին անգամ ծնունդ առաւ բուրժուական շրջաններում։ Արծրունին և մշակականները այդ գաղափարի ամենաջերմ կողմնակիցներն էին։ Ինչ վերաբերում է կղերականութեան, նա բացարձակապէս դէմ էր ազատագրական շարժմանը թէ Տաճկա-Հայաստանում և թէ Կովկասում։

Մինչդեռ բուրժուազիան պնդում էր, թէ մենք Կովկասում ոչ մի ապագայ չունենք և վաղ թէ ուշ ազգային տեսակէտից մենք կորած ենք, այսինքն պի-

(6148) 4491-2010 2203 1372

տի ձուլուենք ավելի զօրեղ ազգերի հետ, թէ մեր փրկութիւնը, մեր ապագան միայն Թիւրքաց Հայաստանումն է և անհրաժեշտ է, որ ամբողջ հայ ազգը առանց դասակարգերի խտրութեան լարէ իր ոյժերը և ստեղծէ այնտեղ մի ազատ հայրենիք, մի գլուխ դնելու տեղ, ուր կարելի լինէր ծաղկեցնել «սեփական ազգային կուլտուրան»,—կղերականութիւնը՝ ընդհակառակը՝ պնդում էր, որ մեր փրկութիւնը, մեր ապագան Հայաստանեաց եկեղեցու մէջ է, նրա բարեզարգուութեան և առաջադիմութեան մէջ և անհրաժեշտ է, որ հայոց ազգը ոչ այլ ինչի մասին չմտածէ, այլ միայն և միայն եկեղեցին հաստատ պահելու և շէնացնելու մասին։

«Հայոց ազգի փրկութեան» այս երկու տարբեր ճանապարհները առաջանում են մեր երկու տիրող դասակարգերի՝ բուրժուազիայի և կղերականութեան դասակարգային տարբեր շահերի ճիշտ ըմբռնողութիւնից։ Կղերականութիւնը դէմ է հայկական ազատագրական շարժմանը շատ հասկանալի պատճառով։ Կղերականութիւնը, հայկական ֆէօդալիզմի այդ գլխաւոր ներկայացուցիչը, համարեա միակ արտօնեալ դասակարգն է հայերի մէջ՝ թէ Թիւրքիայում, թէ Ռուսաստանում։ Հայոց առաջնորդը Թուրք փաշայի և ռուս նահանգապետի հետ միասին համահաւասար չափով միշտ կեղեքելիս է եղել ժողովրդին, և, որպէս շահագործող մի դասակարգ, հաստատուն և պօրտաբոյծ կղերականութիւնը մեր կեանքում նոյն դերն է կատարել, ինչ որ ազնուականութիւնը վրացիների, Թուրքերի և ուրիշ ազգերի մէջ։ Ահա թէ ինչու մեր կղերականութեան իդէօլոգները—Պետրոս Սիմօնեան, Արգար Յովհաննիսեան, Սպանդար Սպանդարեան միշտ անզուսպ կա-

տաղութեամբ են վերաբերուել դէպի ամեն մի ըմբոստացում հայերի մէջ, բացի այն պատմական ըմբոստացումից որ տեղի ունեցաւ եկեղեցական կալուածները խլելիս, երբ կղերականութեան իդէօլոգները մի չը տեսնուած համարձակութեամբ գոռում էին, թէ «հայրենիքը» վտանգի մէջ է, այսինքն վտանգ կար, որ եպիսկոպոսների հաստ փորերը պէտք է ըստ կարգին ներս ընկնէին։ Բոլոր ճնացած դէպքերում «Արձագանքը», «Մեղուն», «Նոր-Դարը» միշտ հայհոյել են յեղափոխականներին, որ նրանք զայրացնում են բարեխնամ Սուլթանական և ռուսական կառավարութիւնը և քարոզել են, որ «հայ ազգի» (իմա հաստատուն կղերականութեան) փրկութիւնը եկեղեցու մէջ է միայն։

Նոյն դասակարգային տեսակէտով առաջնորդուելով, բուրժուազիան «մեր» փրկութիւնը տեսնում է ազատ Տաճկա-Հայաստանում, որովհետև վերլուծելով այդ տեսակէտն էլ, դարձեալ տեսնում ենք, որ ինչպէս կղերականութիւնը «մեր» կամ «հայոց ազգ» ասելով, աչքի առաջ ունի իր սեփական դասակարգային շահերը, նոյնը և բուրժուազիան։ Եւ իսկապէս, ինչ է նշանակում, թէ «մեր» փրկութիւնը «այնտեղ» է, թէ մենք այնտեղ կը ստեղծենք «սեփական» կուլտուրա, թէ մենք կունենանք գլուխ դնելու տեղ։

Ենթադրենք, թէ այստեղ, Կովկասում մենք իսկապէս ոչ մի ապագայ չունենք, ենթադրենք, թէ այնտեղ, Տաճկա-Հայաստանում մենք ստեղծեցինք մի ազատ հայրենիք, սեփական կուլտուրա, գլուխ դնելու տեղ։ Բայց արդեօք կովկասահայ աշխատաւոր մասսան ինչ միջոցով կարող էր օգտուել այդ ազատ հայրենիքից, սեփական կուլտուրայից, այդ գլուխ դնելու տեղից։ Դորա համար նա պէտք է թողնէ իր հողը և

թռչէ ազատ Հայաստան «սեփական կուլտուրայի» բարիքներից օգտուելու համար։ Դա ի հարկէ խիմերա է։ Միլլիոնաւոր աշխատաւոր ժողովուրդը թռչելու այդպիսի մի ընդունակութիւն և ոչ էլ հնարաւորութիւն ունի։ Բայց կայ իսկապէս մի տարր, մի դասակարգ, որ այդ ընդունակութիւնը և հնարաւորութիւնը ունի, և դա բուրժուազիան է։ Դա հարազատ եղբայրն է այն բուրժուազիայի, որը պահանջում է «յանուն ռուս ժողովրդի շահերի» և յանուն Ռուսաստանին վերապահուած ինչ որ «քաղաքակրթական միսսիայի» տիրել Մանջուրիային և սակայն ոչ այդ Մանջուրիան է հարկաւոր ռուս ժողովրդին և ոչ էլ Մանջուրիայի ժողովուրդը կարիք ունի ռուսական «քաղաքակրթութեան»։ Եւ ինչպէս որ ռուս բուրժուազիան ռուս ժողովրդի անունից խօսելով, աչքի առաջ ունի միայն իր սեփական դասակարգային շահերը Մանջուրիայում, նոյնպէս և հայ բուրժուազիան «հայոց ազգի փրկութիւն» ասելով, հասկանում է միայն իր սեփական փրկութիւնը։ Եւ եթէ ռուս բուրժուազիայի բերանում «Ռուսաստանի քաղաքակրթական միսսիան Մանջուրիայում» ոչ այլ ինչ է նշանակում, եթէ ոչ այդ երկրի ազատ շահագործումն, նոյնպէս և հայ բուրժուազիայի բերանում «սեփական կուլտուրա կամ քաղաքակրթութիւն» խօսքերը ոչ այլ ինչ են նշանակում, եթէ ոչ ցանկութիւն՝ ունենալ մի երկիր, որի տէրը ինքը՝ հայ բուրժուազիան լինէր, որը ենթակայ լինէր ամբողջապէս նրա շահագործմանը։

Դա մեր տիրող դասակարգերից երկրորդի՝ բուրժուազիայի տեսակէտն է հայկական ազատագրական շարժման վերաբերմամբ։

Բայց մինթէ տաճկահայերի ազատագրման խնդրին միայն բուրժուազիան է կողմնակից եղել։ Երբէք։ Մինչդեռ բուրժուազիան զանազան պետիցիաներով յանուն Ալեքսանդր II-ի և ուրիշ դիպլոմատիական միջոցներով էր աշխատում Տաճկահայաստանի ազատագրական գործը գլուխ բերել, այդ իսկ ժամանակ սոցիալիստ Միքայէլեանը և ուրիշները հիմք են դնում ժողովրդական յեղափոխական մի կազմակերպութեան —Դաշնակցութեան։ Եւ Միքայէլեանի տեսակէտը բնականօրէն, որպէս աշխատաւոր դասի իդեալոգի տեսակէտ, միանգամայն տարբերւում էր բուրժուազիայի տեսակէտից։ Նա ասում էր.— մինչդեռ այստեղ Կովկասում խնդիրը միայն յաւելեալ արժէքի մասին է, այնտեղ սահմանից այն կողմը մի ժողովրդի ֆիզիքապէս գոյութիւն ունենալու կամ չունենալու—յաւելեալ արեան խնդիրն է դրուած։ Պէտք է որ մենք ամբողջ ոյժով աշխատենք ոտքի կանգնեցնել այդ դժբախտ մարտիրոսացող ժողովուրդը։

Դա կովկասեան աշխատաւոր ժողովրդի եղբայրական տեսակէտն էր թիւրքահայերի վերաբերմամբ։

Սակայն ընդունելով այդ եղբայրական տեսակէտը, կովկասեան աշխատաւոր ժողովուրդը՝ կամ աւելի շուտ նրա իդեալոգները՝ պարզ կերպով տեսնում էին, որ անկարելի է ամբողջ Տաճկաստանի ընդհանուր ազատագրութեան հարց բարձրացնել, որ նախ Տաճկաստանի ոչ բոլոր ժողովուրդներն են հասունացել մի ազատագրական շարժում առաջ բերելու համար և երկրորդ, որ ամենագլխաւորն է, ոչ բոլոր ժողովուրդներն են այն դժոխային վիճակի մէջ, ինչ որ հայերը, նոյն իսկ ընդհակառակը՝ նրանց, այդ ժողովուրդների (ինչպէս օր. քրդերի) բարեկեցութիւնը որոշ չափով հիմնւում է հայերի սարսափելի կեանքի վրայ։ Այդ է պատճառը, որ Դաշնակցու-

թեան սոցիալիստ հիմնադիրները ստիպուած էին միմիայն տաճկահայերի ազատագրութեան հարցը բարձրացնել և, յենակէտ ընդունելով Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, հայկական 6 վիլայէթների աւտօնոմիայի խնդիրը առաջ մղել։ Այդպիսով թէ հայ բուրժուազիայի և թէ սոցիալիստական դաշնակցութեան մօտակայ նպատակը Տաճկա-Հայաստանի վերաբերմամբ միևնոյնն էր։

Այն 90-ական թուականների սկիզբն էր, երբ հրապարակ եկաւ Դաշնակցութիւնը։ Կապիտալիզմը իր երիտասարդական հասակումն էր, իսկ սոցիալական դիֆֆերենցիացիան մանր բուրժուական խաւերում դեռ իր սաղմի մէջ էր, երբ մի կողմից առաջ էր գալիս արդիւնաբերող խոշոր բուրժուազիան, իսկ միւս կողմից պրոլետարիատը։ Դասակարգային սահմանը բուրժուազիայի և պրոլետարիատի միջև դեռ որոշ կերպով չէր գծուել, շահերի անտագոնիզմը երկու դասակարգերի միջև դեռ չէր ընդունել սուր կերպարանք։ Դասակարգային պայքար դեռ չը կար, նա միայն սաղմի մէջ էր։ Չը կար և քաղաքական շարժում։ Մասսան, որ վերջնականապէս դեռ չէր մոռացել պարսկական և տաճկական դաժան լուծը, որ զգալի ճնշումներ չէր տեսնում ռուս կառավարութեան կողմից և վարում էր համեմատաբար բարեկեցիկ կեանք, դեռ շարունակում էր օրհնել ռուսաց թագաւորի թախտը։

Ահա այդ տեսակ պայմաններում է հրապարակ գալիս Դաշնակցութիւնը և սկսում արծարծել Տաճկահայաստանի ազատագրման գաղափարը, որը մի առանձին ոգևորութեամբ է ընդունւում բուրժուական շրջաններում; քանի որ բուրժուազիան էր միայն (կովկասահայերի մէջ), որ այդ գաղափարի իրականացման

մէջ տեսնում էր իր ապագան, իր իդեալը։ Ահա թէ ինչու նա իր փողի քսակը բացում է Դաշնակցութեան առաջ։

Իսկ աշխատաւոր մասսան։ Նա լսում էր իր եղբայրակիցների անասելի տանջանքների մասին և ինքը նոյնպէս տանջւում էր, և ահա այդ մասսայի միջից դուրս են գալիս անհատներ, որոնք տարուած վրէժխնդրութեան սրբազան կրակով, գնում են դէպի երկիր՝ իրանց արիւնով վերականգնելու մարդկային բռնաբարուած իրաւունքները։

Եւ այդպէս՝ Դաշնակցութիւնը իր սկզբնական շրջանում յենւում էր գլխաւորապէս բուրժուական լայն խաւերի վրայ, իսկ աշխատաւոր մասսայից նա ընդունում էր իր մէջ ամենագաղափարական, ամենաբմբոստ և ամենաանձնուէր անհատներին միայն։ Սակայն ինքը աշխատաւոր մասսան հեռու էր Դաշնակցութեան անմիջական ազդեցութիւնից։

Եւ այդպէս՝ առաջին շրջանի, եթէ կարելի է այսպէս ասել՝ նախկին Դաշնակցութիւնը յանձին թէ բուրժուազիայի և թէ ժողովրդի միջից դուրս եկած առանձին անհատների՝ միայն մի գաղափարով էր տարուած— Տաճկահայաստանի ազատագրման գործով։

Այդ է ահա պատճառը, որ Դաշնակցութիւնը իր այդ զուտ տաճկահայկական շրջանում Միքայէլեանի բերանով ազդարարում է մի նշանաբան, որ հետևեալն էր։—«Բաւական է, որ սէկը անկեղծօրէն նուիրուած լինի գաղափարին և համամիտ մօտակայ գործունէութեան նկատմամբ—այդպիսի մարդու հետ միշտ օգտակար է գործել ձեռք ձեռքի տուած»։ Այլ խօսքերով դա նշանակում էր, որ սոցիալիստական կուսակցութիւնը իր դռները պաշտօնապէս բացում է և այնպիսի աշխար-

հայեացքի տէր մարդկանց առաջ, որոնք սոցիալիստ չեն աշխատաւոր կամ աշխատաւորի իդեոլոգ չեն, բայց նուիրուած են Տաճկահայաստանի ազատագրման գործին, «համամիտ են ժամակայ գործունէութեան նկատմամբ»։

90-ական թուականներին, երբ հողը դասակարգային պայքարի համար կովկասում դեռ հասունացած չէր համարւում—սխալ, թէ ուղիղ, այդ ուրիշ հարց է—երբ նամանաւանդ Դաշնակցութիւնը իր յետևից աշխատաւոր մասսա չունէր, այն ժամանակ միանգամայն բնական էր այդպիսի նշանաբանի երևան գալը։

Բայց մանելով Դաշնակցութեան մէջ, բուրժուազիան բնականօրէն պէտք է քաղաքավարի կերպով մի կողմ դնէր «գեղեցիկ, բայց անիրագործելի» սոցիալիստական գաղափարները և թելադրէր իր սեփական տեսակէտը Տաճկահայաստանի ազատագրման վերաբերմամբ։

Իսկ այդ տեսակէտով տաճկահայ ժողովրդի ազատագրումը չէր ինքն ըստ ինքեան, որ պէտք է կովկասահայերի մարդասիրական հոգացողութեան առարկան լինէր, այլ տաճկահայ ժողովուրդը ինքը լոկ մի միջոց էր, որի վրայ յենուելով, «կովկասահայերը» պէտք է սեփական փրկութիւնը գտնէին, այսինքն ազատ Հայաստան ստեղծէին։ Սոսկ տաճկահայ ժողովուրդը եւ նրա ազատագրումը չէր, որ պէտք է ըստ բուրժուազիայի՝ Դաշնակցութեան նպատակակէտը լինէր, այլ այդ ժողովուրդը պէտք է հանդիսանար մի օբ'եկտ, որի վրայ յենուելով բուրժուազիան կարող լինէր իրագործել իր քաղաքական իդեալները։ Պարզ էր ուրեմն, որ կովկասահայ բուրժուազիան Տաճկահայաստանի ազատագրումը միայն տաճկահայերի մասնաւոր գործ չէր համարում, որոնց հարկաւոր էր ա-

ռելի կամ պակաս աջակցութիւն ցոյց տալ (ինչպէս մտածում էին կովկասահայ աշխատաւոր ժողովրդի իդեոլոգները), այլ համարում էր իր սեփական գործը, որի մէջ նա պէտք է ունենար ամենաակտիվ մասնակցութիւնը։ Այդպիսով առաջ է գալիս մի դրսի ոյժ, մի արտաքին ֆակտոր, որը միջամտում է տաճկահայերի ազատագրման գործի մէջ։ Տաճկահայերը, որոնք իրանք շատ թոյլ էին հերկուլեսեան ջանքեր պահանջող ազատագրական շարժումը առաջ տանելու համար, որոնք գիտակցում էին, որ իրանք կանօնաւոր պատերազմ պէտք է մղէին Օսմանեան պետութեան դէմ, մի պատերազմ, որ պահանջում էր առաջինը՝ փող, երկրորդը՝ փող և երրորդը փող,—ստիպուած էին ընդունել այդ արտաքին միջամտութիւնը իրանց ներքին գործերի մէջ, միայն թէ Կովկասը, կամ ճիշտը՝ կովկասահայ բուրժուազիան, հայթայթէր նրանց անհրաժեշտ նիւթական միջոցները։

Ընդունելով կովկասահայ բուրժուազիայի միջամտութիւնը, տաճկահայ ժողովուրդը հէնց սկզբից և եթ հաշտուեց այն մտքի հետ, որ ինքը խնամակալութեան տակ է գտնւում, որ կայ մէկը որը տնօրինում է իր բախտը։ Ահա այստեղ է, որ առաջ է գալիս տաճկահայ իրականութիւնից դուրս մի արտաքին կազմակերպութիւն, որը օրգանական ծնունդը չը լինելով այդ իրականութեան, սակայն տաճկահայ ժողովրդի բախտի տնօրինողն էր։ Առաջ է գալիս Տաճկահայաստանից դուրս մի տիպիքական բիւրօկրատիա, որը՝ նստած հեռու Կովկասում՝ իրան իրաւունք էր համարում ակտիվ մասնակցութիւն ունենալ... ոչ թէ անմիջական արիւնոտ յեղափոխական գործի մէջ,—ծիծաղելի կը լինէր Կովկասում նստած կուռել երկրի մէջ—ոչ, նա այդքան անձնազոհութիւն և արիութիւն երբէք չի ունեցել,—այլ յեղափո-

խական շարժման տակտիկան և քայլերը որոշելու մէջ։ Ինչպէս ռուսական բիւրոկրատիան Պետերբուրգից կառավարում էր մանջուրական բանակը, այնպէս հայկական բիւրոկրատիան Կովկասից de facto հրամաններ էր արձակում երկրի գործիչներին։ Եւ չը նայած, որ այդ բիւրոկրատները գաղափար անգամ չունէին այն երկրի պայմանների մասին, ուր նրանք իրանց կեանքում երբէք ոտք չէին կոխել, չը նայած, որ նրանք չէին ապրում այն դժոխային ցաւերով և այն դժոխային ցաւերից բղխող պահանջները նրանք չէին հասկանում և չէին էլ կարող հասկանալ, չը նայած, որ այդ յեղափոխական պրոցեսների տաք ու փափուկ կաբինետներում կայացրած վճիռները աւելի մեծ չարիք էին դժբաղդ ժողովրդի համար, քան սուլթանական բռնութիւնները, այնուամենայնիւ երկրի գործիչները իրանց սև բախտը անիծելով հանդերձ՝ ստիպուած էին յարմարուել բիւրոկրատական քմահաճոյքներին, որովհետև նրանք այդ անիծեալ ոսկին Կովկասից էին ստանում*)։

Եւ երբ մէկը միւսի յետևից անցնում էին չարաբաստիկ հայդուկային խմբերը և դեռ երկիր չտեսած սահմանագլխի վրայ անհաշիւ ընկնում, զգում էիր, որ այստեղ մի մեծ ոճիր է կատարւում և այդ ոճիրի հեղինակը այն կուշտ և անհոգ դաշնակցական բիւրոկրատիան

---

*) Թէ ինչպիսի վասսալական կախում ունի Տաճկահայաստանը Կովկասեան բուրժուազիայից, այդ երևում է նրանից, որ մինչդեռ տաճկահայերը ոչ մի կարևոր հարց չեն կարող վճռել առանց Ռուսահայ մարմինների մասնակցութեան, ընդհակառակը՝ Կովկասին վերաբերեալ խնդիրներում տաճկահայ մարմինները և ոչ մի ձայն չունեն։

է, որը ինքը արիւն թափելու ընդունակութիւն չունի, բայց այնքան հերոսական կեանքեր այնքան սառնասրտութեամբ զոհաբերել գիտէ։

Ինչպէս տեսանք, բուրժուազիային ոգեւորողը տաճկահայերին օգնելը չէր, այլ այնտեղ «ազատ հայրենիք» ստեղծելը, որի վերաբերմամբ նա կարող լինէր ասելու, թէ սա «իմն է»։ Ահա թէ ինչու քանի որ յոյս կար, թէ Տաճկահայաստանը ազատութիւն կը ստանայ, քանի որ կար մի ոյժ, մի մասսա Տաճկահայաստանում, որի վրայ հենուելով, նա կարող էր իրագործել իր ազգային (իսկ դասակարգային) իդէալները, նա յեղափոխական էր և նոյնիսկ գլուխ էր կանգնած յեղափոխական շարժման։ Բայց երբ Աբդիւլ Համիդը ջարդ ու փշուր արեց հայկական յեղափոխական լեգիոնները, երբ Ռուսաստանը երես դարձրեց հայերից, երբ կորաւ յոյսը ազգային անկախութիւն ձեռք բերելու, բայց երբ տաճկահայ ժողովուրդը մահուան ճիրանների մէջ աւելի քան երբէք կարօտ էր իր «արիւնակիցների» աջակցութեանը, այն ժամանակ, օ այն ժամանակ բուրժուազիան տմարդօրէն և դաւաճանօրէն երես դարձրեց տաճկահայերից.—«դուք այսուհետև իմ ծրագիրների իրագործման համար այլևս անպէտք էք», յայտարարեց նա ցինիկօրէն և անցաւ հակայեղափոխականների շարքերը։

Հրապարակում մնացին աշխատաւոր ժողովրդից դուրս եկած այն անձնազոհ անհատները, որոնց իդէալը «ինքնուրոյն կուլտուրա», «ազատ հայրենիք», «գլուխ դնելու տեղը» չէր, այլ մարդկային բռնաբարուած իրաւունքների վերականգնումը։

Ազատ Հայաստանի հեռանկարի չքանալովը դաշնակցութիւնն էլ մաքրուեց բուրժուական տարրերից. (Մնացին

միայն մի քանի բուրժուա իդեոլոգներ, որոնք դեռ վերջնականապէս չէին կորցրել իրանց յոյսը)։

Սակայն տարիները անցնում էին։ Սոցիալական դիֆֆերենցիացիան Կովկասում արագ քայլերով առաջ էր գնում։ Դասակարգային անտագոնիզմը իրան զգացնել է տալիս։ Միւս կողմից կառավարչական ճնշումներն են կամաց կամաց երևան գալիս և քանի գնում զօրեղանում։ Մասսան երերում է, պայթուցիկ նիւթերը նրա մէջ սկսում են արագ զարգանալ, ներսի գրութիւնից նա դուրս է գալիս և մթութեան մէջ իրեն առաջնորդ փնտրում... Դաշնակցութիւնը ընդառաջ է գնում և ընդունում նրան իր գիրկը։

Նախ կապիտալի ճնշումների ազդեցութեան տակ բանւորական մասսան է անցնում Դաշնակցութեան շարքերը և ապա քաղաքական ճնշումների ազդեցութեան տակ (գլխաւորապէս եկեղեցական կալուածների խլման ժամանակ) նաև ճնացած աշխատաւոր—գիւղացիական և մանր արհեստաւորական—տարրերը։

Դաշնակցութիւնը իր գոյութեան առաջին՝ զուտ տաճկահայկական շրջանից անցնում է երկրորդ՝ տաճկահայ-կովկասեան շրջանին։

Այդ ժամանակ ահա դարձեալ հրապարակ է գալիս բուրժուազիան, այն բուրժուազիան, որը, ինչպէս առօրեայ կեանքում ըստ իր դասակարգային էութեան ոչինչ չէ ստեղծագործում, այլ միայն շահագործում է, այնպէս էլ գաղափարական կեանքում աշխատում է շահագործել ամեն մի ոյժ, որ իրեն մատչելի է։ Ահա թէ ինչու այնքան զօրեղ է նրա մէջ աշխատաւոր մասսան իր ազդեցութեան տակ պահելու ձգտումը։ Եւ ահա թէ ինչու հէնց որ Դաշնակցութիւնը նորից լցրեց իր շարքերն աւելի թարմ և աւելի մեծ լեգիոն-

ներով, բուրժուազիան իսկոյն և եթ նորից Դաշնակցութեան գլուխ անցաւ,—այս անգամ սակայն ոչ այնքան «ազատ հայրենիք» ստեղծելու համար Տաճկահայաստանում, որքան բոլորովին այլ դիտումներով։

Որքան նրա համար ձեռնտու և անվտանգ էր Կովկասում նստած Տաճկահայաստանի համար աւանտիւրներ ծրագրել, ոչ իւր, այլ աշխատաւոր ժողովրդի արիւնով ներկուած աւանտիւրներ, այնքան նրա համար վտանգաւոր էր այստեղ Կովկասում իր քթի տակ թոյլ տալ մի յեղափոխական շարժում, որ իր՝ բուրժուազիայի բարեկեցութեան հիմքերը պիտի փորէ։

Ռուսաստանի ներկայ ազատագրական շարժման մէջ բուրժուազիան այն ակտիվ մասնակցութիւնը չունի, ինչ որ 89 թուին ֆրանսիականը,—այդ նախ այն պատճառով, որ ներկայ Ռուսաստանի քաղաքական կազմը այն աստիճան ֆեոդալական չէ, ինչ որ ֆրանսիականն էր 89 թուին, այլ կիսով չափ բուրժուական։ Վիտէական խնամակալական քաղաքականութիւնը արդիւնաբերութեան վերաբերմամբ բուրժուազիայի միայն երախտագիտութեանը կարող էր արժանանալ։ Միւս կողմից ներկայ Ռուսաստանի կազմակերպուած աշխատաւոր դասը իր զարգացած դասակարգային գիտակցութեամբ բոլորովին այն չէ, ինչ որ ֆրանսիականը 89 թուին, երբ նա ամբողջովին գտնուում էր բուրժուազիայի հրամանատարութեան տակ։ Քաղաքական կազմի մի քանի ֆեոդալական խորդ ու բորդութիւնների շտկումն—ահա ռուսական բուրժուազիայի ամբողջ իդէալը, մինչդեռ կազմակերպուած աշխատաւոր դասի ձգտումները շատ ու շատ հեռու են գնում։ Բուրժուազիան որոշ

չափով համակրում է ներկայ ազատագրական արշաւմանը, բայց միևնոյն ժամանակ աւելի մեծ չափով վախենում է նրանից, որ չը լինի թէ յեղափոխութիւնը աւելի հեռուն գնայ, քան այդ իրեն հարկաւոր է։ Այդ է պատճառը, որ բուրժուազիան բացարձակ պատերազմ չէ հրատարակում ցարիզմին, շատ լաւ հասկանալով, որ բիւրոկրատիան, ինչպէս ասում են, ցունգել,—էլի իր եղբայրն է, որի հետ նա կարող է միշտ էլ համաձայնութեան գալ, մինչդեռ աշխատաւոր դասը նրա օրգանական թշնամին է, որից միշտ վախենալ հարկաւոր է, մանաւանդ, երբ նա գիտակցում է իր դասակարգային շահերը։ Բացի դրանից յեղափոխութեանը միշտ ուղեկցում է անարխիան, որը մի գերեզման է արդիւնաբերութեան համար և որից բուրժուազիան միշտ սարսափում է։ Ահա այդ հանգամանքներն են պատճառը, որ ռուսական բուրժուազիան ներկայ ազատագրական շարժման ընթացքում ակտիվ մասնակցութիւն չի ընդունում յեղափոխութեան մէջ և, գերադասում է մնալ պասսիւ և անվտանգ օպոզիցիայի մէջ։

Ահա թէ ինչու և մեր հայ բուրժուազիան, ռուսական բուրժուազիայի այդ մի մասնիկը, դէմ է յեղափոխական ուժեղ բռնկումներին կովկասահայերի մէջ։ Իսկ ինչ վերաբերում է յատկապէս բուրժուազիայի դէմ ուղղուած բանւորական շարժումներին, այստեղ արդէն բուրժուազիան կենսապէս շահագրգռուած է ամեն մի հնարաւոր միջոցով արգելք հանդիսանալ նրանց։

Ահա թէ ինչու կովկասահայ բուրժուազիան այնքան արժատական, այնքան յեղափոխական հեռու, իրենից շատ հեռու Տաճկահայաստանի վերաբերմամբ,

ընդհանուր առմամբ հակայեղափոխական է այստեղ՝ Կովկասում։

Եւ երբ Տաճկահայաստանին մի անգամ այնքան ամօթալի կերպով դաւաճանելուց յետոյ նա դարձեալ մտաւ Դաշնակցութեան մէջ, պարզ էր, որ նրան մագնիսի պէս քաշողը աշխատաւորների այն անագին լեգիոններն էին, որոնց իր շուրջն էր խմբել Դաշնակցութիւնը, և որոնց ղեկավարութիւնը կարելի էր իր ձեռքը գցել և ծառայեցնել սեփական դասակարգային շահերին։

Եւ ահա բարձրանալով այն տիրապետող դիրքը, որը Դաշնակցութիւնը յատկացրել էր նրան Տաճկահայաստանին օգնութիւն հասցնելու համար, բուրժուազիան ամենատմարդի կերպով սկսում է շահագործել այդ դիրքը իր սեփական դասակարգային անմիջական շահերի համար։ Նա գործադրում է իր աւանդական խարէբայական քաղաքականութիւնը։ Իր իդէօլոգների բերանով նա սկսում է երգել աշխատաւորի ականջին—«Դու դժբախտ ես, իսկ քո դժբախտութեան պատճառը այն է, որ հայ ես և չունիս ազատ հայրենիք, որտեղ դու կարողանայիր մարդավայել և երջանիկ կեանք վարել։ Ահա թէ ինչու պէտք է ժամանակաւորապէս թողնել «ներքին անհամաձայնութիւնները», դասակարգային պայքարը և ընդհանուր ոյժերով նուիրուել ազգային իդէալի իրականացմանը, Տաճկահայաստանի ազատագրմանը»։

Այս գեղեցիկ և շլացուցիչ ճառերով է, որ բուրժուազիան շահեց տաճկահայ դատի ֆանատիկոս իդէօլոգների սրտերը և նրանց միջոցով իր ձեռքը գցեց մասսայի ղեկավարութիւնը։ «Սոցիալիստական» Դաշնակցութիւնն ամբողջովին կովկասեան բուրժուազիայի

սեփականութիւն դառաւ, որը յանուն Տաճկահայաստանի ազատագրման սպանեց յեղափոխական շարժումը Կովկասում։

Ամենասուրբ, ամենանուիրական գաղափարն անգամ այլանդակւում այլասեռւում է, երբ նա նիւթ է դառնում տիրող դասակարգերի շահագործութեան։ Քրիստոնէութիւնը, այդ բարձր վարդապետութիւնը, որ հրապարակ եկաւ թոյլերի և ճընշուածների պաշտպանութեան համար, ժամանակի ընթացքում տիրող դասակարգերի ձեռքին դառնում է մի գործիք հէնց այդ թոյլերին և ճնշուածներին աւելի ևս ճնշելու և ստրկացնելու։ Նոյն վիճակին ենթարկուեցին շատ ուրիշ բարձր գաղափարներ, ինչպէս, օրինակ, հայրենասիրութեան գաղափարը։

Դաշնակցութիւնը, որ երևան էր գալիս մարդկային ամենավսեմ գաղափարները, ամենանուիրական թռիչքներն ու տենչերը այս ցաւոտ երկրում իրականացնելու համար—Դաշնակցութիւնը չը կարողացաւ յարատև ընթանալ իր գծած ուրոյն ճանապարհով, կորցրեց իր ուղեցոյց աստղը, որովհետև անզգուշութիւն ունեցաւ իր ծոցում տեղ տալ մի օձի, որ պէտք է այնուհետև թունաւորէր նրա ամբողջ էութիւնը։

Ինչու առհասարակ այդպէս է պատահում և ինչու այդպէս պատահեց Դաշնակցութեան հետ։

Մարդիկ սովորաբար ժառծում են այնպէս, ինչպէս թելադրում են նրանց սեփական շահերը։ Հասարակական իդեալները բղխում են դասակարգային շահերի ճիշտ ըմբռնողութիւնից։ Չը կայ աբսոլիւտ արդարութիւն մարդկանց համար և ամեն մի դասակարգ

արդարութիւնը չափում է իր սեփական դասակարգային արշինով։

Դասակարգերի ձգտումները բիւրեղացած ձևով արտայայտւում են նրանց գաղափարական ներկայացուցիչների—իդէոլոգների միջոցով։ Ամեն մի իդէոլոգ անկեղծօրէն համոզուած է, որ իր դասակարգի ստեղծած գաղափարները ամենաարդարացի և ամենասուրբ գաղափարներն են և որ նրանց մէջ է ազգի և մարդկութեան փրկութիւնը։ Մի մենարխիստ Պօբէդօնոսցեվ, կամ Գրինգմուտ միանգամայն համոզուած են, որ ռուսաց թագաւորին գահ բարձրացնողը ինքը Աստուածն է և որ Աստուած նրան տուել է այդ թագաւորական իրաւունքը ոչ միայն Ռուսաստանը, այլ և ամբողջ մարդկութիւնը երջանկութեան մէջ պահելու համար։ Մի իշխան Մեշչերսկի միանգամայն անկեղծօրէն համոզուած է, որ Աստուած մուժիկին ստեղծել է պօմեշչիկին ծառայելու համար և որպէս մի ստորին արարած՝ մուժիկը չի կարող բախտաւոր լինել պօմեշչիկի տիրապետութիւնից դուրս, իսկ նրան տիրապետութեան տակ պահելու համար, այսինքն բախտաւոր վիճակի մէջ պահելու համար հարկաւոր է նրան մէկ մէկ ծեծել, որովհետև առանց ծեծի մուժիկը, որպէս մի անխելք արարած՝ չի կարող իր սեփական օգուտը հասկանալ։ Հայ կղերականութեան իդէոլոգ Սպանդարեանը միանգամայն անկեղծօրէն համոզուած է, որ հայոց ազգի փրկութիւնը Հայաստանեայց սուրբ եկեղեցու մէջ է, իսկ ով այդ եկեղեցուց դուրս է, նա հայ չէ և դժոխքի կերակուր։ Բուրժուական իդէոլոգները միանգամայն անկեղծօրէն համոզուած են, որ մասնաւոր սեփականութիւնը սուրբ է (դարձեալ Աստծու մատը խառն է), իսկ սոցիալիզմը մարդկութիւ-

նը տանում է դէպի կորուստ։ «Աստուած մի արասցէ, որ սոցիալիզմի թոյնը մեր ժողովրդի մէջ բուն դնէ» —բացականչում էր Արծրունին՝ բուրժուական «սրբազան» կարգերի մէջ անկեղծօրէն մարդկութեան և մանաւորապէս հայ ժողովրդի փրկութիւնը տեսնելով։

Եւ ո՞վ կարող է ասել, թէ այդ մարդիկ, տիրող դասակարգերի այդ իդէօլոգները չեն սիրում ժողովրդին, ո՞վ կարող է ասել, թէ Պօբէդոնոսցեվը (նոյն իսկ Պօբէդոնոսցեվը!), Սուվօրինը, Ճաւճաւաձէն, Աղայեվը, Սպանդարեանը կամ Արծրունին անկեղծ ժողովրդասէրներ չեն։ Ոչ ոք։ Եւ սակայն... դա այն սէրը չէ, որ տածում են դէպի ժողովուրդը Վազգէնները և Կոլեանները։

Երբ վերլուծում ենք տիրող դասակարգերի տածած սէրը դէպի դեմօկրատիան, մենք տեսնում ենք, որ նա իր մէջ պարունակում է էլեմենտներ, որոնք տրամագծօրէն հակասում են ժողովրդի շահերին, որոնք պայմանաւորւում են ժողովրդի ստրկացումով, շահագործութեամբ և կեղեքումով։ Եւ իսկապէս, ինչն է դրդում տիրող դասակարգին սիրել ժողովրդին, եթէ ոչ այն հանգամանքը, որ ժողովուրդը նրա ստրուկն է, իսկ ստրուկը նրա կերակրողն է։ Տէրը այնքան աւելի է սիրում իր ստրկին, որքան այդ ստրուկը աւելի օգուտ է տալիս իր տիրոջը։ Այդ պէտք է ի նկատի ունենալ և երբէք չշփոթել մի ֆէօդալի կամ մի բուրժուայի տածած սէրը դէպի աշխատաւոր ժողովուրդը այն սիրոյ հետ, որ տածում է դէպի նոյն ժողովուրդը ինքը աշխատաւորը, որը մի մասնիկն է այդ աշխատաւոր ժողովրդի, որը ծնուել է հէնց այդ աշխատաւոր ժողո-

վրդից *), որը սիրում է նրան, որպէս իւրայինին, որպէս հարազատին։ Եւ մինչդեռ աշխատաւորի և աշխատաւորների իդէօլոգների—Գարիբալդիների, Քրիստափորների, Բալմաշովների սէրը դէպի ժողովուրդը—դա որդու սէրն է դէպի հարազատ մայր-ժողովուրդը, ընդհակառակը՝ տիրող դասակարգերի և նրանց իդէօլոգների—բոլոր այդ Սպանդարների և Քալանթարների, Ճաւճաւաձէների և Աղայեվների, Սուվօրինների և Տրուբէցկոյների, բոլոր ֆէօդալների և լիբերալ բուրժուաների սէրը դէպի ժողովուրդը—դա տիրոջ սէրն է դէպի՞ իր կթան կովը։

Եւ ինչպէս տէրը առհասարակ բարի է դէպի իր կթան կովը և աշխատում է քաղցած ժամանակ նրան կերակրել, այնպէս էլ տիրող դասակարգերը բարի են դէպի իրանց կթնատու ժողովուրդը և երբ վերջինս քաղցից լաց է լինում, նրանք փող են հաւաքում յոգուտ ժողովրդի, նրան կերակրում են, որպէսզի քաղցից նա չմեռնի և իրանք կթից չը զրկուեն. այդ բանը բուրժուաները անուանում են «բարեգործութիւն»։ Եւ կամ զանազան սոցիալական ռեֆորմների, բարենորոգումների միջոցով են նրանք բաւարարութիւն տալիս ժողովրդի պահանջներին։ Սոցիալական խնդիրը նրանք վճռում են «բարեգործական» կամ «բարենորոգչական», կամ առհասարակ զանազան չնչին պալլիատիվների, կարկատանների միջոցով։

Մինչդեռ գիտակցական աշխատաւոր ժողովուրդը խնդրի վրայ բոլորովին այլ կերպ է նայում։ Նա պարզ

*) Այստեղ խօսքը մի ընդհանուր երևոյթի մասին է։ Լինում են դէպքեր, ի հարկէ, երբ մէկը ծնունդ է մի դասակարգի, բայց իր գաղափարներով, իր իդէօլոգիայով պատկանում է մի ուրիշ դասակարգի։

տեսնում է, որ այդ «բարեգործութեամբ» և առհասարակ պալլիատիվներով նա չի կարող իր դրութիւնը արմատապէս բարելաւել, որ դրա համար հարկաւոր են ոչ թէ պալլիատիվներ, որոնք ձեռնտու են աւելի շուտ տիրող դասակարգերին, այլ արմատական փոփոխութիւններ սոցիալական կարգերի մէջ, որ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի կարգեր, որտեղ ոչ շահագործութիւն լինի և ոչ էլ «բարեգործութիւն», այսինքն անհրաժեշտ է տապալել տիրող դասակարգերին նրանց տիրային ժողովրդասիրութեամբ հանդերձ, նրանց զզուելի և վիրաւորական «բարեգործութեամբ» հանդերձ։

Ահա ինչ հսկայական տարբերութիւն կայ այդ երկու տեսակի ժողովրդասիրութեան մէջ։

Սակայն որքան պարզ է մի գիտակից աշխատաւորի համար այդ երկու տեսակի ժողովրդասիրութեան տարբերութիւնը, այնքան նա մի գայթակղութեան, մի փորձանքի քար է, մի կատարեալ թակարդ է անգիտակից աշխատաւոր ժողովրդի համար։ Եւ այդ թակարդը նամանաւանդ վտանգաւոր է, որ տիրող դասակարգերը զարմանալի կերպով յարմարուել գիտեն աշխատաւոր ժողովրդի դասակարգային գիտակցութեան զարգացման աստիճաններին։ Այդ տեսակէտից չափազանց բնորոշ է, որ մինչդեռ Արծրունին պարզօրէն (և միամտօրէն ի հարկէ) ասում էր, թէ «սոցիալիզմի թոյնը մենք թոյլ չենք տայ, որ մտնի մեր մէջ, ընդհակառակն այժմեան «Մշակ»-ը և նոյն «Մշակ»-ի սիւները «Դրօշակի» մէջ արդէն զովում, երկինք են բարձրացնում սոցիալիզմը, գեղեցիկ, շլացուցիչ սոցիալիստական ճառամաբանութեամբ թող են փչում իրենց միամիտ ընթերցողների աչքերին, որպէսզի սակայն

վերջը աւելացնեն մի հասարակ «բայց»—... բայց մենք ապրում ենք մի այնպիսի «հազուադէպ մօմէնտում», որը պահանջում է դասակարգերից թողնել իրանց ներքին անհամաձայնութիւնները և ի մի ծուլուել ընդհանուր թշնամու դէմ դրոհ տալու համար»։ Արծրունին, ամեն կողմից բաղդաւոր Արծրունին ապրում էր մի այնպիսի ժամանակ, երբ աշխատաւոր ժողովուրդը Կովկասում մրափում էր ըստ երևոյթին անկենդան մրափով, երբ սոցիալիզմի մասին Կովկասում խօսք չը կար, և Արծրունին կարող էր առանց քաշուելու ուղղակի ասել—«չենք ուզում սոցիալիզմը»։ Բայց եթէ նա անբախտութիւն ունենար ապրելու մինչև մեր օրերը, երբ սոցիալիստական շարժումը իրական մի փաստ է, խեղճը ստիպուած պիտի լինէր դիմելու նոյն խաբերայական*) միջոցներին, ինչ որ այժմ գործադրում են նրա յետնորդները, այն է՝ երկինք բարձրացնել սոցիալիստական կարգերը, որպէսզի յետոյ աւելացնել, թէ ներկայ «մօմենտը» անյարմար է դասակարգային պայքարի համար, կամ բերել մի այլ՝ «մօմենտին» համապատասխան պատճառաբանութիւն։

Պէտք է հասկանալ տիրող դասակարգերի հոգեբանութիւնը, պէտք է կարողանալ կարդալ նրանց հոգու ամեն մի ելևէջը, որպէսզի ազատ լինել նրանց գե-

---

*) Այդ «խաբերայութիւն» խօսքը չը պէտք է հասկանալ առօրեայ մտքով։ Բուրժուա իդեօլոգները իրանց գաղափարները արտայայտում են իրանց դասակարգի շահերի թելադրութեամբ մեծ մասամբ առանց գիտակցելու այդ բանը, այն է՝ ինստինքտական—բնազդական ճանապարհով։ Իհարկէ պատահում են և գիտակցական խաբերայութիւններ, բայց դրանք բացառութիւններ են կազմում։

գեցիկ, շլացուցիչ, բայց աշխատաւոր ժողովրդի համար թունալից և մահաշունչ ֆրազէօլոգիայից։

Պէտք է քննադատօրէն վերաբերուել տիրող դասակարգերի ամէն մի քայլին, որովհետև շատ անգամ նրանց արած քայլերը ըստ երևոյթին «ամենայեղափոխական», «ամենասոցիալիստական» գոյնն են կրում, բայց իրականութեան մէջ դրանք մի մի թակարդներ են աշխատաւոր ժողովուրդը իրանց ճանկերի մէջ գցելու համար։

Պէտք է զգոյշ լինել, որովհետև մենք շատ հեշտութեամբ շնորհիւ մեր անգիտակցութեան կարող ենք գործիք դառնալ մեր շահագործողների ձեռքում ի վնաս մեր սեփական դասակարգային շահերի։

Եւ այդպէս, ուրեմն—մակերևոյթօրէն չը սահենք երևոյթների վրայով և խորը ըմբռնենք նրանց ներքին իմաստը։

Ասում են, որ Դաշնակցութեան մէջ բուրժուազիան մասնակցութիւն չունի։ Դա միանգամայն ճիշտ է այն տեսակէտից, որ մեր խոշոր բուրժուազիան համարեա ոչ մի անմիջական մասնակցութիւն չունի Դաշնակցութեան գործունէութեան մէջ։ Սակայն... սակայն կարիք էլ չը կայ, որ բուրժուազիան անմիջական մասնակցութիւն ունենայ մի հասարակական—գաղափարական շարժման մէջ, քանի որ նա ունի իր գաղափարական գործակատարները, իր իդեօլոգները, որոնք աւելի լաւ գիտեն պաշտպանել իրանց դասակարգի շահերը, քան ինքը բուրժուազիան։ Եթէ Ս. Սպանդարեանը, Ա. Յովհաննիսեանը, Պ. Սիմօնեանը իրանք հոգևորականներ չեն եղել, այդ դեռ չի նշանակում, թէ նրանք կղերականութեան շահերը չեն պաշտպանել և նրանց օրգանները կղերական օրգաններ չեն

եղել։ Աղայեվը, Թօբչիբաշեվը գիւղեր ու կալուածներ չունեն, բայց այդ չի նշանակում, թէ նրանց պաշտպանած շահերը թուրք ազնուականութեան շահերը չեն։ Նոյնը կարելի է ասել և բուրժուազիայի մասին։ Բուրժուա իդեօլոգները կարող են գործարանների, ֆաբրիկաների տէր չը լինել, բայց և այնպէս պաշտպանել գործարանատէրերի շահերը։ Այստեղ էականը ոչ թէ այս կամ այն անձնաւորութիւնն է իր սոցիալական դիրքով, այլ այն աշխարհայեացքը, այն քաղաքական դաւանանքը, որ միացնում է այս կամ այն կուսակցութեան շուրջը այդ անձնաւորութիւններին։

Ո՞րն է Դաշնակցութեան դաւանանքը Կովկասում։

Որոշ դաւանանք նա չունի։ Բայց այդ անորոշութիւնը չափազանց բնորոշ է այն տեսակէտից, որ ներկայ բուրժուական կուսակցութիւնները առհասարակ չունեն իրանց որոշ դաւանանքը, կամ աւելի շուտ ինստինքտօրէն խուսափում են ի լուր աշխարհի յայտնել իրանց դաւանանքը, որովհետև դա կը պարզէր նրանց իսկական ֆիզիօնոմիան և մասսաները յետ կը մղէր իրանցից։ Եւ բուրժուազիան ստիպուած է յարմարուել պայմաններին։ Այսօր նա մի բան է ասում, վաղը մի ուրիշ բան, այսօր նա աւելի դեմօկրատ է, վաղը մի քիչ պակաս՝ նայած թէ աշխատաւոր մասսայի յեղափոխական տրամադրութիւնը և նրա ոյժերը այս կամ այն մոմենտում ինչ աստիճանի վրայ են։ Այդպէս է վարւում ներկայումս Ռուսաստանի բուրժուազիան յանձին կոնստիտուցիօնալիստ — դեմօկրատական կուսակցութեան։

Ըստ էութեան միանգամայն նոյն դերը մեզանում կատարում է Դաշնակցութիւնը։

Իր վճիռը՝ մասնակցելու Կովկասեան յեղափոխա-

կան շարժման մէջ Դաշնակցութիւնը պատճառաբանում է հետեւեալ կերպով—«Աչքի առաջ ունենալով, որ վերջին ժամանակներս Ռուսաստանում և մասնաւորապէս Կովկասում յեղափոխական շարժումը ստացել է անսպասելի լայն չափեր..., որ այդ շարժումների ազդեցութեան տակ բռնապետութիւնը զգալի կերպով թուլացել է... Հ. Յ. Դաշնակցութիւնը որոշում է սկսել Կովկասում յեղափոխական գործունէութիւն։»

Այն մի յեղափոխական կուսակցութիւն սովորաբար պատճառաբանում է իր երևան գալը տիրող յետամնաց կարգերի գոյութեամբ և նրանց տապալելու ձգտումով, իր միսսիան տեսնում է ժողովրդի քնած գիտակցութիւնը արթնացնելու, մասսաներին առաջնորդելու և նրանց դէպի յեղափոխական ակտեր մղելու մէջ։ Իսկ մի կուսակցութիւն, որ ընդհակառակն՝ իր երևան գալը պատճառաբանում է յեղափոխական շարժման գոյութեամբ և հին կարգերի տապալուած լինելովը (աւելի կամ պակաս չափով), նա միայն թիւրիմացութեամբ է իրան յեղափոխական կուսակցութիւն անուանում։

Եւ իսկապէս, եթէ Դաշնակցութիւնը կարողանար անկեղծ լինել, նա պէտք է պարզօրէն ասէր, որ ինքը դէմ է Կովկասեան շարժման, բայց քանի որ մասսան ինքը սկսել է այդ շարժումը և վախ կայ, որ նա անցնի ուրիշ կուսակցութիւնների ձեռքը, այդ պատճառով ինքը ստիպուած է իր վրայ վերցնել կովկասահայ ժողովրդի դատը։

Դաշնակցութիւնը դէմ է յեղափոխական շարժմանը Կովկասում, և եթէ այնուամենայնիւ այսօր նա իրան անուանում է աշխատաւոր ժողովրդի կուսակցութիւն, եթէ պաշտօնապէս նա իր վրայ է վերցրել կովկասահայ աշխատաւոր ժողովրդի դատը պաշտպանելու ընդդէմ տիրող դասակարգերի, եթէ նա վճռել է մասնակցել ազատագրական շարժման մէջ—այդ բոլորը նա արել է միմիայն մի նպատակով—որպէսզի աշխատաւոր մասսաները ձեռքից բաց չը թողնէ։ Դաշնակցութեան բուրժուա ղեկավարները պարզ գիտակցում են, որ եթէ միանգամայն ժխտեն կովկասահայ աշխատաւոր ժողովրդի դատը, այն ժամանակ նրանք բոլորովին կը կորցնեն հողը իրանց ոտքերի տակ և կը դառնան «գեներալներ առանց զինուորների»։ Այդ հանգամանքը ստիպում է նրանց որոշ չափով դասակարգային պայքար մղել ընդդէմ տիրող դասակարգերի, որոշ չափով մասնակցել գործադուլների մէջ, որոշ չափով մասնակցել ընդհանուր ազատագրական շարժման մէջ—բայց ինարկէ այդ բոլորը միմիայն այն չափով, որչափ դա անհրաժեշտ է մասսաները ձեռքից բաց չը թողնելու համար։

Ահա թէ ինչու Դաշնակցութիւնը չի ծգտել արծարծելու և զարգացնելու ժողովրդի մէջ առաջադիմական պահանջներ, չի սովորեցրել նրան կռուել և կռուով ձեռք բերել իր պահանջածները, չի եղել արտայայտիչը ժողովրդի առաջադիմական իդեալների և չի առաջնորդել նրան դէպի այդ իդէալները, այլ ընդհակառակն՝ նա բաւականացել է և այն էլ ակամայից և ստիպուած՝ զանազան պալլիատիվներով բաւարարութիւն տալ մասսաների արդէն ունեցած յեղափոխական պահանջներին, ինչպէս այդ վայել է մի պահպանողական կառավարութեան, որ իր գոյութիւնը քարշ տալու համար ստիպուած է յարմարուել ժողովրդի աճող պահանջներին*)։

*) Այդ տ՝ տակէտից շատ ըն շրոշ է, որ ինչպէս է Դաշնակցութիւնը լուծում բանուորական և ազգուրա-

Այդպիսով մենք տեսնում ենք, որ Դաշնակցութիւնը չէ հանդիսանում օրգանական ծնունդը կովկասահայ աշխատաւոր ժողովրդի և նրա իրական պահանջների, որ որպէս դրսից եկած մի ոյժ, նա ստիպուած է լինում դիմել արհեստական միջոցների ժողովրդի վրայ իր իշխանութիւնը պահպանելու համար, որ նա իր նպատակակէտը ոչ թէ հէնց ժողովրդի իրա մէջ է տեսնում, այլ ընդհակառակն՝ ժողովրդի վրայ նայում է որպէս մի օբ'եկտի վրայ, որ նրան սնհրաժեշտ է այդ օբ'եկտից դուրս նպատակների ծառայեցնելու (իբր թէ ինքնուրոյն հայկական կուլտուրա, սեփական հայրենիք ստեղծելու համար, բայց մենք արդէն տեսանք, թէ ինչ է հասկանում բուրժուազիան այդ մեծադղորդ «սեփական կուլտուրա, սեփական հայրենիք» խօսքերի տակ)։ Մենք տեսնում ենք, որ Դաշնակցութիւնը այդպիսով սկսում է հակադրել իրան ժողովրդին, իր շահերը՝ ժողովրդի շահերին և այդպիսով աննկատելի կերպով վերածւում է մի կաստայի, որի անդամները մեծից մինչև փոքրը մի մի ինքնատիպ բիւրօկրատներ լինելով՝ կազմակերպութեան մէջ մտցնում են բիւրօկ-

---

յին հարցերը։ Իր սեփական ինիցիատիվով Դաշնակցութիւնը երբէք ոչ մի գործադուլ չէ անում, բայց երբ ուրիշ կուսակցութիւններ ընդհանուր գործադուլ են յայտարարում, Դաշնակցութիւնը ինքն էլ է գործադուլ յայտարարում։ Ագրարային հարցում Դաշնակցութիւնը դարձեալ իր ինիցիատիվով ոչինչ չի անում։ Նա սպասում է մինչև որ գիւղացիները գալիս գանգատ են ներկայացնում այս ինչ կամ այն ինչ կալուածատէրից կամ վաշխառուից և այն ժամանակ Դաշնակցութիւնը ուղարկում է իր զինուորներին, որոնք Դաշնակցութեան անունից հրամայում են կալուածատէրերին կամ վաշխառուներին գիւղացիների պահանջներին բաւարարութիւն տալ։

բատական խնամակալութեան քայքայիչ սիստեմը։

Երբ ժողովուրդը և նրա առաջադիմութիւնը դադարում է նպատակակէտ լինելուց Դաշնակցութեան համար, երբ սկսում է տիրապետել նրա մէջ բուրժուական այն տեսակէտը, թէ ժողովուրդը միայն մի միջոց է մի ինչ որ իբր թէ բարձր «սրբազան» դաղափարի իրագործման համար, այն ժամանակ բնականօրէն ամեն մի դաշնակցական սկսում է նայել ժողովրդի վրայ այնպէս, ինչպէս իշխան Մեշչերսկին, որ հաւատացնում է, թէ մուժիկի բախտաւորութիւնը պօմէշչիկի տիրապետութեան մէջ է կայանում, թէ նրան խելքի բերելու և երջանկութեան մէջ պահելու համար հարկաւոր է ժամանակ առ ժամանակ նրան «բոզգի» տալ։ Այդ տեսակ պայմաններում բնականօրէն Դաշնակցութեան շրջիկները սկսում են «յեղափոխութիւնը» տարածել ոչ թէ գաղափարների միջոցով, այլ իշխան Մեշչերսկու գոված «բոզգիի» միջոցով, իսկ ինքը յեղափոխութեան գաղափարը բոլորովին չքանում է նրանց մտածողութեան միջից և նրա տեղ առաջ է գալիս մի ուրիշ՝ այլանդակ գաղափար։ Այդ տեսակ պայմաններում բնական է դառնում այն փաստը, որ ագրարային և ուրիշ հարցերը լուծում է ոչ թէ ինքը ժողովուրդը Դաշնակցութեան ղեկավարութեամբ, այլ ինքը Դաշնակցութիւնը անկախ ժողովրդից, ոչ որպէս մի յեղափոխական կուսակցութիւն արմատական միջոցներով, այլ որպէս մի ամենասովորական կառավարութիւն չնչին պալլիատիվների միջոցով։ Եւ երբ բիւրօկրատական խնամակալութեան սկզբունքը արմատանում է, բնական է, որ այնուհետև ժողովրդի ինքնագործունէութիւնը և ինքնագիտակցութիւնը ոչ միայն չի զարգանում, այլ ընկնում է, և մենք այսօր

պարզօրէն տեսնում ենք, որ «15 տարի յեղափոխական պատրաստութիւն» ստացած ժողովուրդը անընդունակ է գտնուում ոչ միայն կռուելու կալուածատէրերի դէմ, այլ նոյն իսկ ինքն իրան պաշտպանելու խուլիգանական յարձակումներից։

Ակնյայտնի է, որ եթէ այս տարի պատահմամբ Կովկասում չլինէին տաճկահայ կռուող փոքրուած ոյժերը՝ Մուրադներ, Բիձաներ, Քեռիներ, Երևան—Նախիջևանեան շրջանը և ուրիշ շրջաններ չէին կարողանալ դիմանալ թրքական յարձակումներին և այս բոպէին կը լինէին անհամեմատ աւելի վատթար դրութեան մէջ։ Շաբուրի 4—5 հազար ժողովուրդը միաբերան վկայում է, որ իրանց գոյութեամբ պարտական են Մշեցի Սէյդոյին (Անդրանիկի ընկերներից) և նրա երկու ընկերներին։

Բայց հարց է ծագում, թէ ինչու համար այդ 4—5 հազար ժողովուրդը մի՝ թէև հերոսական Սէյդոյի արժէքը չը պիտի ունենային։ Եւ արդեօք դա բիւրօկրատական խնամակալութեան սիստեմի հետևանքը չէ՞, որ մի կողմում մենք տեսնում ենք մարդոչխարների հօտը, իսկ միւս կողմից կռուող տասնեակները և հարիւրակները, դաշնակցական մշտական զօրքը, հայկական «ինքնուրոյն» միլիտարիզմը (բուրժուա իդէօլօգներ! դուք կարող էք փառաւորուել, դա ձեր երևակայած «սեփական կուլտուրայի, սոփական հայրենիքի» սաղմն է)։ Դաշնակցական միլիտարիզմ—իր սեփական սատրապներով, որոնք իրանց իշխանութեան տակ առնելով որոշ բայօններ, մտցրել և մտցնում են այնտեղ սուլթանական ըէժիմը, քար ու քանդ անելով առանց այն էլ աւերուած երկիրը։

Եւ այդ հարկահանութեան սիստեմը, որ ոչնչով չէ

զանազանուում ռուսական բռնապետութեան սիստեմից։

Եւ այդ դատավարութիւնը, որը իր վրայ է վերցրել «սոցիալիստական կուսակցութիւնը», որպէսզի հաւասար չափով պաշտպանէ թէ աշխատաւորի շահերը ընդդէմ կեղեքիչների և թէ կեղեքողների շահերը ընդդէմ աշխատաւորների,—առաջնորդուելով «արդարութեան» սկզբունքով (ախ, այդ բուրժուական «արդարութիւնը» «օրէնքի» առաջ!), դատավարութիւնը, որ իրապէս վաշխառուների ձեռքին մի զէնք է խեղճերին և թոյլերին աւելի ևս ճնշելու համար *)։

Էհ, խոստովանենք անկեղծօրէն, որ Դաշնակցութիւնը Կովկասում լոկ մի կառավարութիւն է եղել կառավարչական բոլոր ֆունքցիաներով, հայկական «ինքնուրոյն» կառավարութիւն (թող կրկին փառաւորուին բուրժուաները), որ մի աստիճան միայն բարձր է եղել ռուս կառավարութիւնից, որովհեաև եթէ այդ էլ չը լինէր, նա կը կորցներ իր raison d'être կեանքի մէջ։ Բայց նա երբէք յեղափոխական կուսակցութիւն չի եղել։

Եւ այդ մի աստիճան բարձր կառավարութիւնը ներկայ փոթորկալից յեղափոխական շրջանում լոկ մի հսկայական պալլիատիվ էր, որ սպանեց մեծ յեղափոխութեան իսկական գաղափարը Կովկասահայերի մէջ, և որի համար ռուսական բռնապետութիւնը կարող է

*) Պէտք է խոստովանել, որ գիւղական ժողովուրդը ընդհանուր առմամբ գոհ է դատավարութիւնից, որովհետև նրա շնորհիւ համարեա վերացել է գողութիւնը։ Գողութիւնը—դա այն ոճիրն է, որ ամենից խիստ է պատժուում դաշնակցական դատաւորների ձեռքով։ Մասնաւոր սեփականութեան սկզբունքն է, որ այնքան սրբութեամբ պաշտպանել գիտեն գիւղական վաշխառու դատաւորները։ Իսկ ճնցած հարցերում...

իր ամենաանկեղծ շնորհակալութիւնը յայտնել Դաշնակցութեան։

—

Ընկերներ! ես սոսկալի մռայլ գոյներով նկարագրեցի Դաշնակցութիւնը, որը իր շուրջն է խմբել հայ ժողովրդի ամենահերոսական, ամենավսեմ և ամենասքանչելի հոգիները։ Բայց երդւում եմ, ես երբէք չէի կամեցել ոչ նահատակուած հերոսների նուիրական յիշատակը անարգել և ոչ էլ կենդանի մարտիկների առանց այն էլ վշտահար սրտերը խոցոտել։ Մենք ամենքս պնդում ենք, որ Ռուսաստանը բռնապետական մի երկիր է, և սակայն դրանով մենք չենք անարգում այդ երկրի բազմաչարչար ժողովուրդները և նամանաւանդ նրա հերոսական մարտիկներին։ Մենք ունենք սև հարիւրակների Ռուսաստան և ունենք կարմիր հարիւրակների Ռուսաստան։ Մենք երկու Դաշնակցութիւն ունենք։ Մէկը բուրժուազիայի—փափկասէր շահագործողների, կուշտ կեղեքիչների Դաշնակցութիւնն է—սև ու խաւար, միւսը չարքաշ աշխատաւորների, անձնուէր մարտիկների,—Քրիստափորների, Բարկէն Սիւնիների Դաշնակցութիւնն է, կարմիր ու դինամիտային Դաշնակցութիւնը, որը սակայն ստրուկ ու հպատակ է այն առաջինին, բայց որը յետ ու առաջ պէտք է տապալէ նրան և գլուխ կանգնէ ժողովրդական ազատութեան։

Ընկերներ! ժամանակ է սթափուելու. մենք ստրուկ ենք բուրժուական իդեօլոգիային։ Դուք գիտէք, թէ ինչպէս տեղի ունեցաւ այդ ստրկացումը։ Բուրժուան և աշխատաւորը, շահագործողը և շահագործուողը իրար ձեռք մեկնեցին մի վեհ գաղափարի իրագործման համար—մի մարտիրոս ժողովրդի մարդկային ամենատարրական իրաւունքները վերականգնելու համար։ Եւ...

և մինչդեռ աշխատաւորը իր կոշտ ձեռներով պողպատէ մուրճն էր պատրաստում Տաճկահայաստանի ստրկութեան շղթաները փշրելու համար, մինչդեռ ժողովրդի իսկական որդիքը իրանց արիւնն էին զոհաբերում մայր—ժողովրդի ազատութեան համար, մինչդեռ աշխատաւորների բոլոր վսեմ իդէօլոգները—Քրիստափորները՝ ընկղմուած ամբողջովին յեղափոխական կարմիր աշխատանքի մէջ, ժամանակ չունէին մի քննադատական հայեացք գցելու իրանց շրջապատի վրայ, իրանց յեղափոխական «ժամանակաւոր» դաշնակիցների վրայ, այդ իսկ ժամանակ այդ ժամանակաւոր դաշնակիցները, բուրժուական իդէօլոգները արդէն իրանց գործը տեսան։ Նոքա արիւն չը թափեցին, ըմբոստացման դարբնոցարանի մխոտ շէնքսի մէջ ազատութեան պողպատը չը պատրաստեցին, սակայն իրանց կուշտ ու փափուկ ստամոքսների թելադրութեամբ դաշնակցական աշխատաւոր մասսայի համար մի իդէօլոգիա մշակեցին և աննկատելի կերպով փաթաթեցին նրա վզին, մի իդէօլոգիա, որ աշխատաւորի իդէօլոգիան չէր, այլ իրանցը—բուրժուազիայինը։

Դանդաղ, օր է ցօր, սիստեմատիկ կերպով բուրժուա ինտելիգենցիան վարակից աշխատաւոր մասսան բուրժուական աշխարհայեցողութեան հակաժողովրդական թոյնով։ Նա սովորեցրեց աշատաւոր մասսային մտածել այնպէս, ինչպէս մտածում է ինքը, ոգևորուել այն ամենով, ինչ որ ձեռնտու է իրեն։ Նա հիպնոզեց դաշնակցական մասսան և ստեղծեց մի մթնոլորդ, բուրժուական մթնոլորդ։

Մենք ստրուկ ենք բուրժուական իդէօլոգիային։

Նրանք մեզ ասում էին. թողէք «ներքին անյամանցայնութիւնները», դասակարգային պայքարը, թողէք կռվկասը և

նուիրուեցէք Տաճկահայաստանին, ամենաակտիվ մասնակցութիւն ցոյց տուէք նրա ազատագրման մէջ։ Մենք լսեցինք նրանց, թողնենք Կովկասը։ Բայց ի՞նչ շահեց Տաճկահայաստանը։ Արդե՞օք մասսան անցաւ սահմանը և ակտիվ մասնակցութիւն ունեցաւ նրա ազատագրական շարժման մէջ։ Ոչ։ Նա միայն առաջուայ պէս իր ոյժերի համեմատ աջակցութիւն էր ցոյց տալիս նիւթապէս և կուռող անհատներով։

Ո՞վ կարող է ժխտել, որ ակտիվ մասնակցութիւնը Կովկասեան մասսայի կողմից Տաճկահայաստանի վերաբերմամբ եղել է մշտապէս լոկ մի ֆիկցիա, որը սակայն անհրաժեշտ էր հայ «ազգասէր» բուրժուազիային՝ ինքնախաբէութեան մէջ պահելով աշխատաւոր դժբախտ հայ ժողովուրդը, չէզոքացնել յեղափոխական շարժումը Կովկասում։

Ո՞վ կարող է ժխտել, որ «ակտիվ մասնակցութիւն» ունեցել է միայն մեր անաբոյս բիւրօկրատիան, որ արտայայտուել է նրանով, որ՝ նստած հեռու ապահով Կովկասում՝ նա միշտ միջամտել է տաճկահայերի ներքին գործերի մէջ, սպանել է թիւրքահայերի մէջ ինքնագործունէութիւնը, ինքնավստահութիւնը և նախաձեռնութեան ոգին, սովորեցրել է նրանց միայն հրամաններ ի կատար ածել և խնամակալութեան տակ գտնուել։ Ո՞վ կարող է ժխտել, որ այդ կուշտ ու անհոգ բիւրօկրատիայի թելադրած տակտիկան չէր, որ ճակատագրական անաջողութիւնների դուռը բացեց տաճկահայ ազատագրական շարժման համար։

Եւ այս ամենը չէ նշանակում, թէ մենք պէտք է ժխտենք տաճկահայ խնդիրը։ Երբէք և երբէք։ Բոլոր երկիրների աշխատաւոր ժողովուրդները իրար եղբայրներ են։ Եղբայրը չի կարող սառնասիրտ նայել իր վի-

ճակաւոր եղբօր վրայ։ Բոլոր երկրների աշխատաւոր ժողովուրդները պէտք է որ ձեռք մեկնեին իրանց արնաքամ եղբօրը, տաճկահայ ժողովրդին։ Եթէ այդ չի կատարուում այս րոպէիս—դորա համար կարելի է միայն ցաւել և խորը ցաւել։ Բայց դուցէ դա հասկանալի է. նրանք շատ հեռու են տաճկահայ ժողովրդից, շատ հեռու են ոչ միայն տարածութեամբ, այլ և իրանց կեանքի պայմաններով, նրանք չեն հասկանում տաճկահայ ժողովրդի գերմարդկային տանջանքները։ Զէ՞ որ նրանք երբէք չեն զգացել այդ տանջանքները։ Բայց մենք կովկասահայերս, մենք, որ մի ժամանակ ապրել ենք տաճիկ և պարսիկ դաժան լուծի տակ, մենք որ նոր ենք միայն սկսել փոքր ի շատէ ազատ շունչ քաշել, մենք շատ թէ քիչ հասկանում ենք տաճկահայերի դրութիւնը։ Եւ մենք կովկասահայ աշխատաւորներս չենք կարող օգնութեան ձեռք չը մեկնել մեր տաճկահայ եղբայրներին, բայց միայն օգնութեան. մենք իրաւունք չունենք միջամտելու, խառնուելու նրանց ներքին գործերի մէջ, որովհետև մենք թէև հասկանում ենք նրանց ընդհանուր դրութիւնը, բայց ծանօթ չենք երկրի կոնկրետ պայմանների հետ, որի շնորհիւ և մենք փչացնում ենք նրանց գործը. որովհետև դրանով մենք կանգնում ենք սայթաքման այն քարի վրայ, որը գլորում է թէ կովկասահայ աշխատաւոր ժողովրդին և թէ տաճկահայերին կովկասահայ բուրժուազիայի գիրկը, որը դէպի կորուստն է տանում թէ մեզ, թէ նրանց։

Մենք պէտք է իմանանք վերջապէս, որ նստած Կովկասում՝ մենք չենք կարող ակտիվ մասնակցութիւն ունենալ տաճկահայ շարժման մէջ, որ ակտիվ մասնակցութիւն ունենալու իրաւունք ունեն միայն այն կովկասահայերը, որոնք ամբողջովին տրուած տաճկահայ

գործին՝ կռուում են երկրում տաճկահայերի շարքերում։

Ժամանակ է վերջապէս բարձրաձայն ասել այն ամենը, ինչ մենք թագցրել ենք մինչև հիմայ կուսակցական կեղծ պատուասիրութիւնից դրդուած։ Ժամանակ է, որովհետև այդ թագցնելը դէպի կորուստն է տանում մեզ։ Ժամանակ է, քանի որ հայ ժողովրդի յետամնացութիւնը այժմ աւելի քան պարզ է ամենքի համար, բացի այն բուրժուաօրէն մտածողներից, որոնք սիրում են կրկնել հայ բուրժուազիայի ինքնահաւան ֆրազները, «թէ մենք հայերս» կուլտուրապէս բարձր ենք մեր բոլոր հարևաններից, թէ «տուտուց վրացիները» ինչ են որ՝ մեզ հետ համեմատած։ Ժամանակ է հասկանալ, որ այո, հայ բուրժուազիան իրաւունք ունի ասելու, թէ ինքը բարձր է «վրացիներից», որովհետև նրանք չեն կարողանում մրցակիցներ դուրս բերել հայ բուրժուազիայի դէմ, բայց հայ աշխատաւոր ժողովուրդը պէտք է վերջապէս հասկանայ, որ ինքը և բուրժուազիան—դա հաւասարիշ, միևնոյն հասկացողութիւնները չեն և եթէ հայ բուրժուազիան ուժեղ է վրացական բուրժուազիայից, դա չէ նշանակում, թէ հայ աշխատաւոր ժողովուրդն էլ բարձր է վրաց ժողովրդից։ Եթէ բուրժուազիան «մենք» ասելով, որպէս տիրող դասակարգ չէ ուզում ժողովրդին բաժանել իրանից, իր շահերը նրա շահերից, այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ պէտք է թուխակի պէս կրկնենք այդ բուրժուական տեսակէտը։

Մեր քաղաքական հասունութիւնը չափազանց յետ մնաց, մենք կուլտուրապէս չափազանց յետ մնացինք, և այդ հէնց նրանց շնորհիւ, որոնք այնքան դոռում դոչում էին հայկական ինքնուրոյն կուլտուրայի մասին։ Ընկնելով բուրժուական «կուլտուրայի» յետևից, մենք ձեռք չը բերինք իսկական կուլտուրան։

Մենք՝ աշխատաւորներս ոչ միայն դէմ չենք, ոչ միայն չենք կարող դէմ լինել ազգային կուլտուրային, այլ ընդհակառակն հէնց մենք ենք, որ ամենից շատ ենք շահագրգռուած մայրենի լեզուի, դպրոցի, գրականութեան բարգաւաճման մէջ, որովհետև, եթէ նրանք՝ բուրժուաները գիտեն օտար հարուստ լեզուներ, եթէ նրանք հնարաւորութիւն ունեն օգտուել եւրոպական հարուստ կուլտուրայի բարիքներից, մենք աշխատաւորներս ոչ մի լեզու չը գիտենք, բացի մայրենի լեզուից, մենք ոչ մի կուլտուրայից օգտուելու հնարաւորութիւն չունենք, բացի մայրենի կուլտուրայից։

Մենք ամենաջերմ պաշտպաններն ենք ազգային կուլտուրային, բայց մենք այդ կուլտուրան որոնում ենք ոչ միայն սահմանից այն կողմ, ինչպէս բուրժուազիան, որ կուլտուրա խօսքի տակ բոլորովին ուրիշ բան է հասկանում, այլ ամենուրեք, ուր մենք ապրում ենք։ Երբ բուրժուազիան ասում է, թէ մենք Կովկասում ապագայ չունենք, նա իր՝ բուրժուական տեսակէտից խաչ է քաշում մեզ վրայ, բայց մենք խաչ չենք քաշում մեզ վրայ, մենք՝ աշխատաւորներս մի վայրկեան անգամ չենք կասկածում, որ մենք պիտի փշրենք ամեն տեսակի բռնապետական հակաժողովրդական կարգերը և նրանց տեղ պիտի հաստատենք աշխատաւորների քրտինքի արդիւնքը երաշխաւորող ժողովրդապետութիւնը։

Եւ եթէ այսօր հալածուած է մեր լեզուն, մեր դպրոցը, մեր գրականութիւնը—վաղ թէ ուշ մենք յետ կը խլենք մեր բոլոր իրաւունքները, որովհետև չը կայ այս աշխարհում բռնապետութիւն, որը չը կարծանուի ժողովրդական միահամուռ ջանքերի հարուածների տակ։

Եւ արդէն իսկ մենք շատ բան փշրել ենք, շատ բան յետ ենք ստացել, բայց յետ ստանալով, մենք այն յանձնել ենք մի ուրիշ թշնամու՝ բուրժուազիային և կղերականութեանը։ Պէտք է փշրել նաև մեզ վրայ տիրապետող բուրժուա կղերականն այդ ատելի լուծը, պէտք է խլել նրանց ձեռքից մեր՝ աշխատաւորներիս արիւնով գնուած ժողովրդական դպրոցը, գրականութիւնը, ժողովրդական հարստութիւնը և հաստատել մեր կեանքում իսկական ժողովրդապետութիւնը։

Ազատագրումն բուրժուական-կղերական կապանքներից—ահա այն մեծ խնդիրը, այն մեծ պրոբլեմը, որի լուծմանը այսօր հայ ժողովուրդը պիտի տրուի մի ուժեղ թափով...

Իսկ դորա համար մենք՝ աշխատաւորներս պէտք է սահման գծենք մեր և տիրող դասակարգերի մէջ։ Դաշնակցութիւնը, որի մէջ այսօր համահաւասար կերպով տեղ ունեն թէ աշխատաւորը և թէ բուրժուան, թէ գիւղացին և թէ վաշխառուն, թէ տիրացուն և թէ տէրտէրը —Դաշնակցութիւնը պէտք է դադարէ միջդասակարգային նեխուած հակառաջադիմական մի կազմակերպութիւն լինելուց։ Դաշնակցութիւնը պէտք է լինի միայն և միմիայն աշխատաւորների դասակարգային կուսակցութիւնը։

Ի՞նչպէս։

Մեր բայօնական ժողովները ահա քանի քանի անգամն է, որ վճիռներ են կայացնում Դաշնակցութիւնը մաքրել, զտել բուրժուական տարրերից։ Սակայն ոչինչ չի փոխւում և բուրժուա տարրերը մնում են իրանց տեղը։

Ինչո՞ւ։

Որովհետև բուրժուաներին հեռացնելու վճիռը կայացնում են... հէնց իրանք բուրժուաները։

... Ճիշտ այնպէս, ինչպէս ռուսական բիւրօկրատիան ուզում է ոչնչացնել բիւրօկրատիզմը Ռուսաստանում։

Բայց ժամանակ է հասկանալ, որ այդ բոլորը դաշնակցական բիւրօկրատիան անում է լոկ ամենկողմից լսւող բողոքող ձայների ազդեցութեան տակ՝ այդ ձայները քնացնելու նպատակով միայն։

Որ Դաշնակցութեան ազատագրումը բուրժուական տիրապետութիւնից պէտք է տեղի ունենայ ոչ թէ վերևից, այլ ներքևից, որ մենք աշխատաւորներս պէտք է ինքներս կազմակերպուենք և միաժամանակ գրոհով վերականգնենք մեր իրաւունքները։

Մենք այս բաբելոնեան ժխորի մէջ չենք էլ կարողանում որոշել, թէ ո՞վ է մեր թշնամին և ո՞վ է մեր բարեկամը—այնքան նուրբ է մեր թշնամի դասակարգի քաղաքականութիւնը, բայց երբ մենք աշխատաւորներս կիրականացնենք դասակարգային սկզբունքը կեանքի մէջ և պատերազմ կը հրատարակենք տիրող դասակարգերին, այն ժամանակ մեր բոլոր թշնամի տարրերը հէնց իրանք բարձրաձայն կը համարեն մնաս բարով ասելու մեզ և մեր դասակարգային կուսակցութեանը—Դաշնակցութեանը։

Եւ այն ժամանակ միայն մենք կարող ենք փշրել մեր մտածողութիւնը կաշկանդող բուրժուական իդէոլոգիան և կանգնել դասակարգային ազատարարական ճանապարհի վրայ։



ОТДЕЛ



ՀՀ Ազգային գրադարան
NL0264762

5473

9(47 925)
Ц-52